№ 105 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 20

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 20 № 105

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամս. 10 րուբ., 11 ամս. 10 ր., 10 ամս. 9 ր., 9 ամս. 8 ր., 7 և 6 ամս. 6 ր., 5 ամս. 5 ր., 4 ամս. 4 ր., 3 ամս. 3 ր., 2 ամս. 2 ր., 1 ամս. 80 կ. և առաքման ծախք՝ 20 կ.: Ամերիկա տարեկան 6 դոլլար, Եւրոպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 րուբլի, Թիւրքիա 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
մինչեւ Կովկասի հանքային Ջրերը:
Հասցէն՝ Կիսլովոդսկ, հիւրանոց «Россія»:
(ա. օ.) (առ.) 464. 3—1

ԷՍՍԵՆՏՈՒԿԻ ◆ ՊԵՍՏԻԳՈՐՍԿ ◆ ԿԻՍԼՈՎՈԴՍԿ
ԲԺԻՇԿ
ԱՐԱՄ ՄԿՐՏՉԵԱՆՑ
Մոսկվայի Կայսերական Համալս. կանանց հիւ. կլինիկայի ասիստենտ:
կանանց հիւանդութիւններ և մանկաբարձութիւն:
Հասցէն և ընդունելութեան ժամերի մասին տեղեկանալ «Գրուպպայի» գրասենեակից կամ «Пятигорское Эхо» լրագրից:
(Հ. Կ.) (պու.) 463. 10—1

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻՆ
Ընդունում է հիւանդներին (բգի, քթի և ականջի հիւանդ.)
Կովկասեան հանքային Ջրերում,
Մայիսի 1-ից մինչև սեպտեմբեր:
Пятигорскъ, Верхн. бульваръ., д. кн. Гирей.
(Հ. Կ.) (առ.) 370. 10—6

Կանանց I հիւանդանոց
Ծննդաբերական բաժանմունքով:
Բէբուտովսկայա փող. 58, տելեֆոն 230.
Բաց է ամբողջ տարին: Ամառը բժ. Մ. Գ. ՄԿՐՏՉԵԱՆՑԸ մնում է հիւանդանոցում:
(Հ. Կ.) (առ.) 462. 10—1

ՓՈՐՁԵՑԷՔ
Ստերելիզացիայի ենթարկված
ԻԴԵԱԼԻ ՍԵՐԸ
ՐՕԶԵՆՏՕՎԻ
առանց բացիլների, սուրճի և թէյի համար. չէ փչացնում. միանգամայն առողջապահական:
ԳՏՆՎՈՒՄ Է ԱՄԵՆՈՒՐԵՔ
(Հ. Հ.) (П. 74440) առ. 456. 9—1

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի:
Տելեֆոն 695
Ե. Գ. ՖԵԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.:
Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՁԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ:
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը:
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:
Բ. Ս. ՄՈՒՍԽԵԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ՄԻՐՁՕՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Ն. Գ. ՁԻՁԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկ պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճար խորհրդի համար 50 կոպէկ:
(օ. մ.) ա. 38. 100—40

ԲԱՐԵՀԱՃ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ի՞նչպէս կը վերաբերվի Կովկասը դէպի օտար կապիտալների մուտքը: Կը համարէ՞ արդեօք նրան մի վնասակար հանգամանք թէ՞ ընդհակառակը կը նայէ նրա վրա իբրև մի բարերար գործօնի վրա և ցոյց կը տայ դէպի նա բարեհաճ ընդունելութիւն:

Այդ և այդ տեսակ հարցեր ծագել էին կովկասցիների համար և մի քանի տարի սրանից առաջ, երբ եւրոպական կապիտալը հիւր եկաւ մեր երկիրը նաւթային, պղնձահանքային, անտառային և մի քանի ուրիշ ձեռնարկութիւնների մէջ:

Դա արդիւնաբերական ծրագիրների կազմութեան տենդային մի շրջան էր, որը ոչ միայն Կովկասի սահմաններում էր արտայայտութիւն ստանում, այլ և ամբողջ Ռուսաստանի բոլոր մասերում:

Անաջող պատերազմը և մանաւանդ նրան յաջորդող հիւանդոտ և քայքայիչ անցողական շրջանը կանգնեցրին եւրոպական կապիտալների հոսանքը դէպի Ռուսաստան և միևնոյն ժամանակ վանեցին ասպարէզից և այն տեղական կապիտալները, որոնք գտնվում էին շրջանառութեան մէջ:

Յարուցված հարցը այն ժամանակ առիթ տուեց մեծ վիճաբանութիւնների, որոնց արձագանքները և արտայայտութիւնները տեղ գտան և «Մշակի» էջերում:

Վիճողները հանդէս էին բերում օտար կապիտալների ներմուծման դրական և բացասական կողմերը, ցոյց էին տալիս, որ դեռ պակասում է կուլտուրական ընդունակութիւն լիակատար կերպով շահագործելու և բուացնելու այդ կապիտալները երկրի օգտին, բայց միևնոյն ժամանակ ընդգծում էին, որ միայն կողմնակի կապիտալների աջակցութեամբ կարելի է զարկ տալ երկրի արդիւնագործութեան զարգացման, որը նեղվում է սեփական կապիտալների բացակայութիւնից:

Վերջ ի վերջոյ կապիտալների ներմուծման դրական առաւելութիւնները աւելի գերադասելի ճանաչվեցին, քան այն երկիւղները, որոնք յայտնվում էին երկրի անպատրաստ լինելու մասին: Իսկ մինչև որ վիճաբանութիւնները շարունակվում էին, օտար կապիտալը մուտք էր գործում և առաջ էր բերում որոշ փոփոխութիւններ դրամական շուկայում և առ հասարակ առևտրի և արդիւնագործութեան ասպարէզում:

Այժմ էլ կարելի էր վիճաբանութեան համար արժանաւոր և հիմնաւոր հանգամանքներ ներկայացնել և եկւոր կապիտալների վերաբերութեամբ առարկութեան թեր և դէմ կէտեր հանդէս բերել, բայց ներկայ տնտեսական պայմանները այնպէս են դասաւորվել, որ առանց երկար տատանումների և խորհրդածութիւնների մարդիկ ուղղում են ընդհանուր հրաւէր և ողջոյն այդ կապիտալներին:

— Թող գան այդ կապիտալները և որքան շուտ՝ այնքան լաւ:

Այդպէս է գերակշռող տրամադրութիւնը: Եւ եթէ նոյն իսկ վտանգաւոր լինէր օտար կապիտալների մուտքը մեր երկրի մէջ, այնուամենայնիւ ոչ միայն ոչ ոք արգելք չէր հանդիսանայ նրանց արշաւանքին դէպի մեր երկիրը, այլ և կը նպաստէր, որքան հնար և կարողութիւն կունենար:

Ներկայ բոպէն տարբերվում է նախկինից: Դրամի ներկայ պահանջը բոլորովին ուրիշ է, քան նախկինը:

Ի՞նչ էր դրութիւնը մի քանի տարի սրանից առաջ: Ահա ինչ: Տնտեսական կեանքը աստիճանաբար զարգանում էր և ընդարձակվում: Սովորական տնտեսական գործառութիւնների վրա աւելանում էին նորերը և խնդիրը միայն այն բանին էր վերաբերում՝ արդեօք աւելի՞ ևս մեծացնել ու ընդարձակել ձեռնարկութիւնները թէ՞ լինել սպասողական և զգուշաւոր վիճակի մէջ: Այն ժամանակ օտար կապիտալները դրել էին հարց միայն «աւելորդ պատառների» մասին, որոնք կարող էին լինել և չը լինել:

Իսկ այժմ:

Այժմ բոլորովին ուրիշ են պայմանները:

Այժմ աւելորդ պատառի խնդիրը չէ հրապարակի վրա, այլ դրամական ծարաւի ու քաղցի: Այժմ կապիտալների այն պակասի խնդիրն է, որ առաջ է եկել տնտեսական տագնապի շնորհիւ: Այժմ դրամի վերստին էժանացման և դիւրամատչելիութեան խնդիրն է դըրված հրապարակի վրա:

Ծարաւի, քաղցի և սաստիկ կարիքի ժամանակ, անշուշտ, կարող են տեղի ունենալ անշահաւէտ գործառութիւններ և պայմանաւորութիւններ. բայց անհրաժեշտութեան հրամայողական ներկայ պահանջը ճնշում է ուրիշ խորհրդածութիւններ և հաշտեցնում է մարդկանց շատ անյարմարութիւնների հետ:

Եւ հասկանալի է, թէ ինչու այնպիսի մեծ տենչով ու փափագով սպասում են շատերը կողմնակի կապիտալների մուտք գործելուն մեր երկրի մէջ: Սպասում են, որովհետև յոյս ունեն, որ փոքր տոկոսով գոհացող եւրոպական կապիտալը նորից կը դիւրացնէ տնտեսական գործառութիւնները և առևտրական ձեռնարկութիւնները, արժէք կը տայ ամեն տեսակ գոյքերի և կալուածների, որոնք վաճառման ասպարէզից դուրս էին հանվել միայն այն պատճառով, որ նրանք չէին կարող այնպիսի խոշոր տոկոսներ տալ գնողներին, ինչպէս այդ տալիս էին բանկերը և էժան ձեռք բերված արժեթղթերը:

Անկասկած՝ օտար կապիտալը կօգտվի հանգամանքից, ձեռնտու և էժան պայմաններով ձեռք կը գցէ շատ արդիւնաւէտ ձեռնարկութիւններ և կալուածներ մեր երկրում:

Այո, այդ կը լինի:

Բայց ո՞վ է մեղաւոր, որ մենք ինքներս ընդունակ չենք մեզ օգնելու և փոխանակ դիւրութիւններ ստեղծելու մեր ֆինանսական հրապարակում և դրամական շուկայում, ընդհակառակը, ծանրացրել ենք և դժուարացրել շրջանառութիւնները, մինչև կողմնակի ոյժը կը գայ մաքառելու խոչընդոտների դէմ, վերցնելով դրա համար որոշ վարձատրութիւն իր օգտին:

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Այն լուրը՝ թէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Իզմիրլեանը մտադիր է միջնորդութիւն զարթեցնել ռուսաց կառավարութեան առաջ, որպէսզի Ռուսաստանը իր հովանաւորութեան տակ առնէ թիւրքահայերին, ահագին անբաւականութիւն է առաջ բերել գերմանական մամուլի էջերում:

Ձախաւոր ազատամիտ «Վօսս. Ցայտ.» լրագիրը յայտնում է, որ «համաձայնվել մի այդպիսի պրօտեկտօրատի՝ Թիւրքիայի համար այդ միևնոյնն է՝ թէ մահվան դատավճիռը ստորագրել իր համար»:

Պահպանողական-յետադէմ «Կրէյցայտ»-ը միևնոյն կարծիքն է յայտնում աւելի խիստ ձևով:

«Պօստ» լրագիրը յայտնում է, որ, եթէ Ռուսաստանը այդ առիթով համապատասխան դիպլոմատիական քայլեր անէ Կ. Պոլսում, հազիւ թէ կարող լինի յոյս դնել Ֆրանսիայի ու Անգլիայի աջակցութեան վրա:

Նացիօնալիստների «Տագ. Ռունդ.»-ը շանթեր է ուղղում Ռուսաստանի դէմ այն բանի առիթով, որ աւստրիահպատակ Գալիցիայի ռուսինները, գնալով Պետերբուրգ Գոգոլեան տօնին մասնակցելու, ռուս օֆիցերների հետ միասին խմել են սլաւոնների միութեան կենացը և համաձայնութիւն են կայացրել հանդիսաւոր կերպով տօնելու Բեռլինը գրաւելու 150-ամեակը:

(«Слово»)

—

Կ. Պոլիս.—Սուլթանական իրադէով գերմանական 16 օֆիցերներ ընդունված են թիւրքական զանազան զօրամասերում: Նրանց վրա պարտականութիւն է դրվում բարեկարգել զօրքը:

Դեակօվի շրջակայքում կալանաւորված են «Համիդիէ» անունը կրող ալբանական գաղտնի կազմակերպութեան անդամները, թւով 24 հոգի, որոնց մէջ է նաև Դեակօվի քրէական դատարանի նախագահը:

Բիթլիսի վիլայէթում հայերը թիւրք իշխանութեան թոյլտուութեամբ կազմակերպել են միլիցիօնէրների զօրախումբ: («Р. У.»)

—

Երլդըզ-Քեօշկում գտնված թղթերը քըննելիս երևացել են Քեամիլ փաշայի խիստ վարկաբեկող վաւերաթղթեր: Գտնվել են Քեամիլի նամակները, որոնցից երևում է, որ պարլամենտի անվստահութիւնը ստանալուց և պաշտօնից հեռանալուց յետոյ էլ նա շարունակում էր մշտական յարաբերութիւնները Աբդիւլ-Համիդի հետ, աշխատելով սեպացնել իր թշնամիներին, որոնցից մի քանիսը այժմ գտնվում են բարձր պաշտօններում: Հաւանական է, որ այդ գտնված նամակները հիմք ծառայեն Քեամիլի դէմ գործ սկսելու:

—

«Рус. Вѣд.»-ն, հիմնված արտասահմանեան լրագիրների տեղեկութիւնների վրա, պնդում է, որ մեր «Հեռագրական Գործակալութիւնը», հաշիւ տալով թիւրքական մինիստրութեան յայտարարութեան մասին, էական կէտեր է բաց թողել:

Աւելորդ ապացոյց Գործակալութեան անշնորհքութեան, և ուրիշ ոչինչ...

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 18 մայիսի

Թիւրքաց հիւպատոսարանում ապաստանած Սաթթար խանը և Բաղըր-խանը անաջող փորձ արին իրանց մարդկանց միջոցով փակել Թաւրիզի շուկաները: Նրանք երկուսն էլ իրանց կողմնակիցներով ցանկութիւն յայտնեցին ընդունել թիւրքահպատակութիւն: Սաթթար-խանի կողմնակիցները լուրեր են տարածում, թէ թիւրքաց զօրքերը Մարաղայի և Սուջ-Բուլաղի վրայով գալիս են դէպի Թաւրիզ: Իսկապէս Մամաշ-մանգուր ցեղի պարսկական քիւրդերի մի քանի հազար մարդ կողոպտում են Միանդաբը և Սուջ-Բուլաղը: Տեղական մահմեդական և քրիստոնեայ ազգաբնակութիւնը անվտանգ է: (Հ. Գ.)

—

Ի նկատի ունենալով պարսկական գանձարանի սպառումը և մէջլիսի ընտրութիւններ կազմակերպելու անհրաժեշտ միջոցների բացակայութիւնը, ռուս կառավարութիւնը մտադիր է տալ պարսից կառավարութեանը մի փոքրիկ փոխառութիւն, որպէսզի հոգացվեն անհրաժեշտ պետական հոգսերը: Սակայն այս փոխառութիւնը, ինչպէս հաղորդում են պաշտօնական աղբիւրներից, ոչ մի առնչութիւն չունի այն մեծ փոխառութեան հետ, որ խոստացել են Ռուսաստանը և Անգլիան շահին՝ վերջին համաձայնութիւնը կնքելիս: Սա կը տրվի մէջլիսի գումարումից և նրա համաձայնութիւնը ստանալուց յետոյ: Իբրև գրաւական այս փոխառութեան արգելք կը դրվեն պարսկական պետական մի քանի եկամտային աղբիւրների վրա: («Слово»)

ՔՆՆԱԴԱՏՕՐԷՆ ՎԵՐԱԲԵՐՎԵՆՔ

«Մշակի» այսօրվայ համարում արտատպում ենք Կ. Պոլսի «Մանզումէի Էֆքեար» թերթից Պարիզի «Ժուրնալ» լրագրի մի յօդուածը Ադանայի դէպքերի մասին, հայ թերթի նկատումներով հանդերձ:

Մի ֆրանսիացի օֆիցեր, ականատես Ադանայի ջարդերին, նկարագրելով այդ ջարդերը իրանց սոսկալի կերպարանքով՝ չէ զլացել միևնոյն ժամանակ և որոշ մեղադրանքներ բարդել հայերի վրա, ցոյց տալու համար թէ հայերը իրանց վարմունքով գրգռել էին թիւրքերի կատաղութիւնը և ատելութիւնը:

«Մանզ. Էֆքեար» թերթը, տպելով ֆրանսիացի օֆիցերի յօդուածի թարգմանութիւնը, իր կողմից յայտնում է միայն այն, թէ հայերի մասին գրածները բարբաջանքներ են՝ քաղված Ադանայի թիւրքական «Իթթիդալ» թերթից և թէ «Ժուրնալ» լրագիրը թշնամաբար է տրամադրված դէպի հայերը:

Անշուշտ, օտարները յաճախ սխալվում են հայերի վերաբերութեամբ: Բայց լինենք և ինքնաքննադատ: Չը մոռանանք, որ միայն ֆրանսիական «Ժուրնալ» և ռուսաց «Нов. Вр.» թերթերի պէս լրագիրները չեն հայերի մասին աննպաստ կարծիք յայտնողները: Չը մոռանանք, որ վերջերս Բեռլինի «Տագեբլատտ» լրագիրը, ինչպէս և անգլիական մի առաջադէմ թերթ և ռուս «Слово» թերթի պէս մի առաջադէմ, ազատամիտ և լուսաւոր լրագիր սաստիկ աննպաստ կարծիքներ յայտնեցին հայերի գործելակերպի մասին Թիւրքիայում: Այդ գործելակերպը նրանք անպայման դատապարտում են: Ուրեմն պէտք է քննել այն հարցը, թէ որքան իրաւացի և հիմնաւոր է այդ մեղադրանքը, և արդեօք հայերի գործելակերպը Թիւրքիայում այնպէ՞ս է, որ առիթ է տալիս թիւրքերին՝ գրգռվել նրանց դէմ և եւրոպացիներին՝ մեղադրանքներ բարդել նրանց վրա ու աննպաստ կարծիքներ յայտնել հայ ժողովրդի բարոյական կողմի մասին:

Դեռ նորերս «Слово» թերթը (№ 788) մի առաջնորդող յօդուածի մէջ, նուիրված Ադանայի կոտորածին և Կովկասում կատարվող ձերբակալութիւններին, դատապարտելով հայ յեղափոխական խմբերի նեղսիրտ գործելակերպը, մեղադրեց դրանց, որ նրանք մասնակցեցին մարտի 31-ի հակայեղափոխութեան մէջ, որ հայ պատգամաւոր Զօհրապը ընտրվեց փոխ-նախագահ այն պարլամենտի, որին այդ օրերը ապստամբված զինուորները մաքրեցին երիտասարդ-թիւրքերից, իսկ մի ուրիշ հայ պատգամաւոր, Վարդգէսը, չամաչեց գնալ իբրև պատգամաւոր ահրարական պարլամենտի պատգամաւորների հետ միասին՝ Սալոնիկի լէգէօներներին ընդ առաջ, ամօթալի, երկմիտ միսիայով՝ հաւատացնելու նրանց, թէ սահմանադրութիւնը կը ծաղկէ Աբդիւլ-Համիդի դաւաճան ձեռքի տակ:

Մենք գիտենք նոյնպէս, որ նորերս Էրզրումում հայ ցուցարարներ գրգռեցին թիւրք ազգաբնակութեան տրտունջը և բողոքները՝ դուրս գալով հրապարակ ինչ-որ մի ազգային դրօշակով:

Ուրեմն խիստ և քննադատ լինենք դէպի մեր արարքները, մեր գործելակերպը և մեր դէմ եղած ամեն մի յարձակումն չը համարենք իբրև արդիւնք թշնամական վերաբերմունքի և այլն:

Ոչ, աշխատենք հասկացնել, համոզել օտարազգի քննադատներին, որ անարդարութիւն է մասնաւոր խմբակների, յեղափոխական կազմակերպութիւնների գործելակերպը, վարմունքը փաթթել ամբողջ հայ ժողովրդի շլինքին և նրան պատասխանատու համարել: Աշխատենք համոզել թէ եւրոպացի քննադատներին և թէ իրանց թիւրքերին՝ թէ հայ ժողովուրդը, Թիւրքիայում, չունի որևէ առանձին, սեպարատիստ ձգտումներ, թէ ոչ ոք այնքան չէ ցանկանում և չէ ձգտում բարեկարգված տեսնել Թիւրքիան, ոչ ոք այնքան չէ ձգտում ապրել հաշտ, միաբան թիւրքերի հետ և խաղաղ կեանքի անձնատուր լինել, որքան հայ ժողովուրդը: Դատապարտենք մենք ինքներս մեր տնաբոյս խելապականների վարմունքը, որոնք ժողովրդին ղեկավարելու յաւակնութիւնն ունենալով՝ չը կարողացան ըմբռնել բոպէի պատմական նշանակութիւնը և գործիք դարձան ռէակցիայի ձեռքում, թէև, բարեբաղդաբար, նկատելով ապա իրանց ոճրագործութիւն հանող սխալը՝ յետ կասեցին այդ ճանապարհից:

Այո, լինենք քննադատ դէպի մեզ և աշխատենք առիթ չը տալ թիւրիմացութիւնների:

Հ. Առաքելեան

ԱԴԱՆԱՅԻ ՋԱՐԴԸ

(Ականատեսի մը կողմէ պատմուած)

—

Պարիզի «Ժուրնալ» թերթը ապրիլ 23 (ն. տ.) թուով Մերսինէն ուղղուած հետևեալ թղթակցութիւնը կը հրատարակէ, սա ծանօթութեամբ։

Մեր աշխատակիցներէն մին օսմանեան ջուրերը ղրկուած ֆրանսական մարտանաւերէն մէկուն մէջ ծառայող իր բարեկամ օֆիցերէն ստացած է յոյժ հետաքրքրաշարժ նամակ մը, որ կը պատմէ Ադանայի վերջին ջարդը։ Ահա այդ նամակին գլխաւոր հատուածները։

Մերսին, 23 ապրիլ.— Ոչ մէկ պատմութիւն կրնայ ճշգրիտ գաղափարը տալ Ադանայի զարհուրելի ջարդին։ Վաթսուն հազար բնակիչ ունեցող այս քաղաքին մէջ միայն և շրջակայ գիւղերուն մէջ երեսուն հազար հայեր ջարդուեցան ամենավայրագ կերպով։

Փճացումի գործը տևեց երեք օր՝ սկսեալ ապրիլ 13 չորեքշաբթի օրէն մինչև ուրբաթ՝ ապրիլ 15։

Երկար ատենէ ի վեր կանխամտածուած էր այս մարդազոհը, և անշուշտ Կ. Պոլսէն նշանաբան մը փութացուց անոր գործադրութիւնը։ Անկողմնակալ ըլլալու համար պէտք է ըսել, թէ հայերը, իրենց ծայրայեղ պահանջումներուն և նաև իրենց նեղսիրտ բնաւորութեան պատճառաւ ատելի դառնալով, վերջապէս կերևի թէ թուրքերուն համբերութիւնը սպառեցին։ Ասոնք ամեն տեսակ գրգռումի կենթարկուէին։

Հայ թատրոններուն մէջ կը ներկայացուէին այնպիսի թատերախաղեր, որոնց հերոսները թուրք՚ը դուրս կը վռնտէին Փոքր-Ասիայէն և գահուն վրայ կը բարձրացնէին հայ թագաւոր մը, որ խշխելով գիրիի վիճակի կը վերածէր օսմանցիները։

Դպրոցներու մէջ բացէ ի բաց թուրքերուն դէմ ատելութիւն կուսուցանէին, և կը ծանուցանէին մօտալուտ ապստամբութիւնը, որ ամենակարող պիտի ընէր հայերը։

Հայոց առաջնորդը յայտ յանդիման սուրբ պատերազմ կը քարոզէր, հաւատացեալները յորդորելով ծախել իրենց ստացուածքը զէնք գնելու և Թուրքիան փճացնելու համար *)։

Թուրքերը ասկից զատ պաշտօնապէս ջարդին սկզբնական պատճառ ցոյց կուտան երկու թուրքի սպանութիւնը հայու մը կողմէ, զոր թող որ իրենք ալ սպաննել կուզէին։ Հայը ինքզինքը պաշտպանելով սպաննած էր զանոնք իր ռեվոլվէրով։ Վալին իմանալով հրամայեց մարդասպանը փնտռել և իրեն բերել. և այսպէս զանիկա ձեռք բերելու պատրուակով, թուրք հրոսախումբեր իրենք իրենց գլխուն, և ձեռքի տակէ պաշտպանուած, խուժեցին հայոց թաղերը, և ըլլալիքը տեղի ունեցաւ.—կարճատև բանակռիւներ և սկզբնաւորութիւն ջարդերու, որոնք ծայր տուին յանկարծ ահաւոր հրացանաձգութեան մը, ինչ որ ցոյց կուտայ կանխամտածուած ըլլալը։

Կրակի առաջին հարուածներուն՝ եւրոպացիք իրենց տուները ապաստանեցան։ Հայերը խիտ առ խիտ կարգերով ոչխարի հօտերու պէս կը փախչին ամեն կողմ, բայց ամենուրեք կը բախին հրացաններով, ռեվոլվէրներով, եաթաղաններով զինուած խուժանին։ Թիւրքերը,—վրանաբնակ, արիւնարբու և թալանող ժողովուրդ,—վար կիջնեն գիւղերէն և դաշտերէն դէպի քաղաք, կարծես նշանաբանի մը հնազանդելով, և կը գործակցին ջարդերուն։ Շրջակայքը կայրեն հայոց ագարակները և անոնց բնակիչները կը ջարդուին անգթօրէն։ Կը յիշատակուի ագարակ մը, ուր ապաստանած էին հարիւրի չափ փախստականներ։ Թուրքերէն պաշարուած և իրենք զիրենք պաշտպանելու անկարող, մի առ մի դուրս հանեցին զանոնք, և ամեն անգամուն նոր դիակ մը գետին կը թաւալի։

Քաղաքին մէջ կը թալանեն և հայոց տուները կայրեն՝ բնակիչները թրէ անցնելէ վերջ։

Աւելի շուտ լմնցնելու համար, սպաննելու ձանձրոյթն ալ չեն տար իրենց։ Տուները կը բռնկցնեն և եղկելիները կը խորովին աւերակներուն տակ։ Այսպէս հարիւրէ աւելի ածխացած, և իրարու դէմ ոտքի վրայ սեղմուած դիակներ, փոքրիկ սենեակի մը մէջ՝ ուր դիզուած էին։ Ի՜նչ ահաւոր պարագայ անոնց համար։ Եթէ դուրս ելլէին, մահը ստոյգ էր գնդակներուն կամ եաթաղանի հարուածներուն տակ, եթէ մնային՝ կրակով մահը անկասկած էր։

Նկարագրելը անկարելի արհաւրալից տեսարաններ իրարու յաջորդեցին այս երեք օրերուն մէջ։ Ամենուրեք նախճիր, առևանգութիւն, սպանութիւն, սպաննելու հաճոյքին համար, որովհետև ոչ ոքի կը խնայուէր։ Մարդասպանները իրենց կատաղութեան մէջ կը յարձակէին մեռեալներուն վրայ և անոնց դիակներուն վրայ տակաւին հրաղէնի հարուածներ կը պարպէին խիստ մօտէն։

Կը յիշատակուի կին մը՝ որ յաջորդաբար կրեց այդ կատղածներէն քառասունին վաւաշտ յարձակումները։ Եւ հարիւրներով կրնանք յիշատակել այս տեսակ իրողութիւններ։ Կանդամատէին մարդիկը և կիները՝ անոնց վերջին մահուան հարուածը տալէ առաջ՝ և կը խնդային անոնց տառապանքները տեսնելով, և իրաւցնէ այս զզուելի արարածները վայրագ վայելք մը կիմանային այս խժդժութիւններէն։

Թուրք մը կաշխատէր խնայել կնոջ մը, որ, կըսէր, իր կնոջը կը նմանէր, բայց կատաղի խումբ մը վրայ հասաւ և կտրեց անոր երկու ստինքը։

Ջարդին առաջին լուրը առնելով, Մերսինի անգլ. հիւպատոսը Ադանա վազեց իր կնոջ հետ, որ անձնուիրութեան հիանալի տիպար մըն է, որուն գեղեցիկ և անձնուէր վարմունքը ամեն գովեստէ վեր է այս տխուր դէպքերուն ատեն։

Հիւպատոսը իր թարգմանին տունը գնաց և զայն վալիին քով ղրկեց իմացնելու՝ թէ այս վայրագութեանց պատասխանատու կը բռնէր զինքը։

Վալին չլսելու զարկաւ և բաւականացաւ միայն զօրք ղրկելով, օտար հաստատութիւնները և եւրոպական տուները պաշտպանելու համար։ Մնաց որ եւրոպացիք բնաւ անհանգիստ չէին, որովհետև շարժումը իրենց դէմ ուղղուած չէր։

Անգլիացի հիւպատոսին և իր կնոջ շնորհիւ եւրոպացիք կրցան քիչ մը պարենաւորուիլ սարսափի այդ երեք օրերուն։

Ձի նստած, մեծ համարձակութեամբ, վալիին կողմէ ակամայ ղրկուած քանի մը թուրք զինուորներու ուղեկցութեամբ, քանի մը անգամ քաղաքին շրջանը ըրաւ, ջանալով միտքերը խաղաղեցնել, բայց դժբաղդաբար պարապը ելած գնդակ մը, կամ թերևս—ինչպէս կըսուի—հայու մը կողմէ ուրիշի մը նետուած գնդակ մը ջախջախեց անոր աջ թևը, զոր օդին մէջ բարձրացուցած էր, աղաչելով որ ջարդերը դադրեցնեն։

Ըսողներ ալ գտնուեցան, թէ հայերը եւրոպացի մը զարնելով՝ կուզէին այդպէս Եւրոպան դրդել շահագրգռուելու իրենց դատին։

Երկու ամերիկացի միսիոնարներ ալ սպաննուեցան մոլորուած գնդակներէ, Յիսուսեան հայր մըն ալ վիրաւորուեցաւ։

Աւարը տեղի ունեցաւ մասնաւորապէս երկրորդ և երրորդ օրը։

Պէտք չէ կարծել թէ Թուրքերը այս դժբաղդ գործէն անվնաս դուրս ելան։ Յաճախ լաւ կազմակերպուած դիմադրութեան կեդրոններու բաղխեցան։

Պէտք է ըսել, որ 13 տարի առաջ տեղի ունեցած ջարդերուն ժամանակ հայերը զէնք չունէին և ոչխարներու պէս մորթուեցան, կրաւորապէս ենթարկուելով իրենց ճակատագրին։ Այս անգամ այդպէս չեղաւ։ Երկար ատենէ ի վեր՝ Թուրքիոյ մէջ զէնք մտցնելու դժուարութեան հակառակ, հայերը կրցան հայթայթել, իրաւ է թէ փոքրաքանակ, այլ սակայն ըստ բաւականին, դիմադրելու և նոյնիսկ կարենալ Թուրքերը վանելու յաղթողաբար ինչ ինչ կէտերու վրայ։

Այսպէս սկիզբէն հայերը տիրեցին երկու մզկիթներու, և անկէց, կռիւին երեք օրերուն, կրցան Թուրքերէն ճշմարիտ մարդազոհ մը ընել *)։

Թուրքերը չկրցան յարձակիլ կարևոր թաղի մը վրայ, բնակիչները յաջողելով վանել բոլոր յարձակումները **)։ Միակ հայ մը, լաւ պատնիշաւորուած և սպառազէն, պարծենցաւ թէ ինք միայն 60 Թուրք սպաննեց։ Թուրքերուն կորուստը երկու հազար հոգի կը հաշուուի։

Շաբաթ օր ամեն ինչ կը թուէր վերջացած ըլլալ քաղաքին մէջ, անշուշտ օտար մարտանաւերուն հասած ըլլալուն լուրին վրայ (***)։

Վալին հրամայեց արագ-արագ անհետացնել վայրագութեանց հետքը։ Թուրքերուն դիակները թաղուեցան, բայց հայերունը Ադանայի մէջէն անցնող Սիհուն գետը նետուեցան։ Գետը այս միջոցին հեղեղանման կը հոսի ձիւնհալին պատճառաւ, և դիակները խառնիխուռն կը թաւալին դէպի ծով, Ադանայէն քսան քիլոմեթր հեռի։

Մենք ահա կը տեսնենք դիակները, որոնք ծովեզերքին երկայնքը կը բերուին հոսանքներէն, և եւրոպական մարտանաւերը կրնան տեսնել անոնց խումբ խումբ քշուիլը դէպի ծով կամաց-կամաց, անդամատուած և ուռեցած։ Քիչ առաջ կրցանք տեսնել չորս տարեկան աղջնակի մը դիակը, կուրծքը եաթաղանի հարուածով մը բացուած։ Շանաձուկերը շուտ պիտի անյայտացնեն այս զարհուրանքներուն հետքերը։

Ֆրանսացի օֆիցերներ Ադանա գացին և կրցան իրենց աչքովը տեսնել գործուած վայրագութիւնները։ Մարտանաւերուն հրամանատարները վալիին քով գացին և այս տեսակ դէպքերու կրկնութիւնը արգիլելու համար միջոցներ ձեռք առնելու հրամանը հասկցուցին։ Սպառնացան զօրք ցամաք հանել, եթէ չկրնայ երաշխաւորել հանդարտութիւնը։

Քանի մը հազար հայեր կան տակաւին վանքերու մէջ ապաստանած, և այս խեղճերը, խելացնոր, չեն համարձակիր դուրս ելլել, տակաւին աչքի առջև ունենալով մղձաւանջային տեսիլները, և վայրկեանէ վայրկեան ահաբեկելով միշտ սպառնացող Թուրքերուն յարձակողական վերադարձէն։

Գիւղերուն մէջ մասնակի ջարդեր կը շարունակուին դեռ։ («Մանչ. Էֆք.»)

---

*) Այս բարբանջանքները առած էր Ադանայի «Իթթիդալ» թերթը, որ սկիզբէն այս կարգի զրպարտութիւններով և սուտերով թուրք խուժանը հայոց դէմ գրգռելու ընթացքը բռնած էր։ Մանաւանդ թատրոններու մասին ըսուածը բացարձակ սուտութիւն է, եթէ սակայն օֆիցերին նամակին մէջ ուղղակի «Ժուրնալի» խմբագրութեան թագուն հայեացքներն ալ մտցուած չեն։ Ծանօթ է արդէն «Ժուրնալի» ընթացքը 1905-ի Կովկասի հայ-թաթար ընդհարումներուն առթիւ իր հրատարակած թղթակցութիւններէն, իր էջերուն մէջ հիւրընկալելով բոլորովին խեղաթիւրուած տեղեկութիւններ։ Խմբ. «Մանզումէի»

*) Ադանայէն ազատուող և հոս եկող անձեր կը յայտարարեն թէ երբեք ոչ մզկիթ գրաւուած է և ոչ ալ յարձակում գործուած հայոց կողմէ։ Եղածը միմիայն ինքնապաշտպանութեան ճիգեր են հայոց կողմէ։ Խմբ. «Մանզումէի»

**) Այս թաղն ալ սակայն փճացաւ երկրորդ ջարդին, ապրիլ 12-ի (հ. տ.) ահեղ յարձակման և հրդեհին ատեն։ Խմբ. «Մանզումէի»

Ն. Վ. ՉԱՐԻԿՈՎ

—

Մի քանի օր առաջ պաշտօնապէս Կ. Պոլսի ռուսաց նոր դեսպան նշանակվեց Ն. Վ. Չարիկովը։ Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ռուսական դեսպանի անձնաւորութիւնը առանձին կարևորութիւն է ներկայացնում մեզ հայերիս համար, անհրաժեշտ ենք համարում տալ նոր դեսպանի համառօտ կենսագրութիւնը։

Ն. Վ. Չարիկովը աւարտելով Կայսերական Ալէքսանդրեան լիցէյը 1875 թւին, ծառայութեան է մտնում արտաքին գործերի մինիստրութեան մէջ։ Մի քանի տարուց յետոյ նշանակվում է Բուխարեստ ռուսական ագենտ և ապա այնտեղից էլ փոխադրվում Բօլգարիա։

1890 թւին նա նշանակվեց ասիական դեպարտամենտի գործավար և նոյն տարին էլ ուղարկվեց Կ. Պօլիս դեսպանական առաջին քարտուղարի պաշտօնով։

Այնուհետև նա եղել է դեսպանութեան խորհրդատու Բեռլինում, իսկ 1896 թւին նշանակվել է Բօլգարիայի դիպլօմատիկական գործակալ։

1897 թւին ստանձնեց մինիստր-ռեզիդենտի պաշտօնը Հռոմի պապի մօտ։ Այդ ժամանակ Հռոմի ու Ռուսաստանի միջև ծագել էին մի շարք բարդ հարցեր, որոնք պահանջում էին դիպլօմատից նուրբ հմտութիւն, որը և Չարիկովը կատարեց յաջողութեամբ։ Հռոմից նա տեղափոխվեց Սերբիա արտակարգ դեսպանի ու լիազօր մինիստրի պաշտօնով։

1904 թւին նշանակվեց արտաքին գործերի մինիստրութեան խորհրդի անդամ, իսկ յաջորդ տարին ուղարկվեց Նիդերլանդիայի թագուհու մօտ արտակարգ դեսպանի և լիազօր մինիստրի պաշտօնով։

1907 թւի փետրվարի 5-ին նշանակվեց արտաքին գործերի մինիստրի օգնական, որը և վարում էր մինչև այսօր։

Ն. Վ. Չարիկովին Կ. Պօլսի դեսպան նշանակելը համակրութեամբ է ընդունվել դիպլօմատիկական շրջաններում։ Եռապետական համաձայնութեան կողմնակիցների շրջանում յոյս են տածում, որ Չարիկովը իր նոր պաշտօնում կը գործի Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ համերաշխութեամբ, կաշխատի Թուրքիան մօտեցնել եռապետական համաձայնութեան և ջլատել աւստրօ-գերմանական հետզհետէ աճող ազդեցութիւնը։

Չարիկովը համարվում է Մերձաւոր Արևելքին լաւածանօթ անձնաւորութիւններից մէկը և, շնորհիւ իր վարած ծառայութիւնների, մօտիկ ծանօթ է այնտեղ կատարվող իրերի դրութեանը։

PAX

—

Խաղաղութեան միջազգային մնայուն բիւրօն, որ գտնվում է Բեռն քաղաքում և որի նախագահն է այժմ Լա-Ֆոնտէն, հետևեալ շրջաբերականն է ուղղել Խաղաղութեան բոլոր ընկերութիւններին, 1909 թ. մայիսի 18-ին կատարվող ցոյցերի առիթով.

«Այս մայիսի 18 ին, Խաղաղութեան առաջին կօնֆերէնցիայի տարեդարձի առթիվ—տարեդարձ, որ տասներորդն է իր գումարումից ի վեր—տեղիք կայ մի վճռական քայլ անել յօգուտ միջազգային իրաւախոհութեան։ Այդ նպատակով, զանազան երկիրների Խաղաղասէրները և Խաղաղասէր ընկերութիւնները պէտք է դիմեն, թէ գրաւոր ուղերձ ձևով, թէ անդամների պատգամաւորութեամբ, այդ երկիրների պատշաճաւոր կառավարութիւններին, խնդրելով նրանց յարել իրաւարարութեան (արբիտրաժի) այն դաշնագրին, որ կնքվել է Դանիայի և Հօլլանդիայի միջև, դաշնագիր, որով այդ երկու ազգերը ընդունել են պարտադիր կերպով արբիտրաժի ենթարկել բոլոր այն վէճերը, որոնք կարող են ծագել իրանց մէջ»։

Բազմաթիւ ընկերութիւններ հետևել են այս յորդորին։

—

Մայիսի 14-ին, 15-ին, և 16-ին (ն. տ.) Շտուտգարդում կայացել է Խաղաղութեան գերմանական ընկերութիւնների երկրորդ ազգային կօնգրէսը, ուր շօշափվել են ի թիւս այլոց և հետևեալ հարցերը. Խաղաղային գերմանական ընկերութեան դիրքը փոքրիկ ազգութիւնների վերաբերմամբ, սպառազինութիւնների սահմանափակումը, երեխաների միջազգային փոխանակութիւնը։ Հռետորների թւում եղել են նաև բարօնուհի Սիւտներ և պրօֆէսոր Քիդ։

Պատերազմի ջնջմանը նպաստող միջազգային բժշկական ընկերակցութիւնը, որի նախագահն է դօքտոր Ռիվիէր, մարտի 21-ին կայացած իր ընդհանուր նիստի մէջ հետևեալ իղձերն է արտայայտել.

1) Պէտք է որ մարդկային համախմբումների կազմութեան մէջ միջամտեն միայն բնական դաշնակցութեան խնդիրները, բացի ույժից։

2) Պէտք է որ ազգային և տեղական հարցերը տեղի տան մարդկայնական հարցերին։

3) Պէտք է որ հաղորդակցութեան ճանապարհները նկատվեն իբրև աղբիւր հասարակաց բարօրութեան։

4) Պէտք է որ անյապաղ կազմվեն միջազգային դատարաններ, բաղկացած բոլոր երկիրների ամեն տեսակ համախմբումների ներկայացուցիչներից և զանազան ազգերի կողմից ուղղակի ընտրված քաղաքացիներից, դատելու համար միջազգային վէճերը։

5) Պէտք է որ չափաւորող միջոցներ ձեռք առնվեն սպանիչ գործիքների պատրաստութեան և օդային նաւարկութեան գեղեցիկ գիւտը չը կարողանայ ծառայել մահվան գործին։

—

«Deutche Revue» գերմանական հանդէսը հրատարակել է մի յօդուած, որի մէջ գերմանացի պետական խորհրդական ֆօն Բրիւնս աշխատում է ապացուցանել, թէ ժամանակակից զէնքերի կատարելագործութիւնը փոխանակ պատերազմը աւելի արիւնահեղ դարձնելու, ընդհակառակը, զգալի կերպով նուազեցրել է նրա գործած աւերումները։

Ֆրանսիական «Siècle» թերթը հարցրել է Ֆրեդերիկ Պասսիին, թէ արդեօ՞ք նա համամիտ է այդ կարծիքին։ Պասսին, մի գեղեցիկ յօդուածով, տպված այդ թերթի մէջ, ցոյց է տալիս, թէ որքան անհիմն է այդ կարծիքը։ Եթէ, ասում է նա, աւերման նոր գործիքները որևէ կերպով նպաստել կարողանային պատերազմի պէս պատուհասի վերջնական անհետացման գործին, այդ կը լինէր նրա համար, որ նրանք դարձրել են պատերազմը աւելի սոսկալի, աւելի զզուելի, աւելի անմարդկային և, հետևաբար, աւելի դատապարտելի և վտանգաւոր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Երևան, 17 մայիսի

Երևանի բանտում վախճանվեց տիֆից իգդիրեցի Արտաշէս Սուքասեանցը, որին այսօր հողին յանձնեցին իր ծանօթներն ու հարազատները սրտի դառն կսկիծով։ Հանգուցեալի ազգականները հիւանդութեան մասին իմացել էին միայն երկու օր առաջ, բանտային վարչութիւնն ու բժիշկը ոչ մի կերպ թոյլ չը տուին նրանց տեսնել նոյնիսկ հիւանդին։ Հանգուցեալը ազնիւ սրտի տէր մի վառվռուն երիտասարդ էր, յարգված բոլոր շրջաններից ու ծանօթներից և կատարեալ անմեղ զոհ դարձաւ վերջին տխուր օրերի։ Նրա մօտ խուզարկութեան ժամանակ ոչինչ չէր գտնված և ինքն անձամբ ներկայացել էր ոստիկանութեան, իմանալու թէ ինչո՞ւ են խուզարկութեան ենթարկել իր բնակարանը։ Ոստիկանութիւնը ձերբակալել էր նրան։

Գերեզմանատանը դամբանականներ խօսեցին իր ընկերներից Գ. Տէր-Թովմասեան, Վ. Կանայեան և Գաբրիէլով անունով մի ռուս։ Դագաղի վրա դրված էին 3 պսակ համակրողներից և բարեկամներից։

Կ. Թադ.

—

Ախալցխա, 17 մայիսի

Ամսիս 15-ից 16-ի գիշերը, ժամը 2-ին, մանրակրկիտ խուզարկութիւն կատարվեց տեղիս Կարապետեան դպրոցի ուսուցիչ Խաչատուր Տէր-Ենոքեանի բնակարանում։ Տարել են բոլոր գրքերը, լրագիրները և ձեռագիր թղթերը։ Գաւառական վարչութեան մէջ դէպքի մասին արձանագրութիւն կազմելով՝ լուսաբացին ազատ են արձակում Տէր-Ենոքեանին՝ մինչև գրաւված թղթերի ընթերցումը, որ լինելու է խուզարկվածի ներկայութեամբ։ Խաչատուր Տէր-Ենոքեանին խուզարկելուց մի ժամ առաջ խուզարկութիւն է կատարվել տիկին Կալիպսէ Զարխճեանի բնակարանում։ Նոյն կերպ են վարվել և սրա հետ։ Երկուսի էլ խուզարկվելու պատճառներն անյայտ են։

Մուրադ-Ասպետ

ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՄԲԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Ամսիս 15-ին Գէորգեան ճեմարանի ամբողջ ուսուցչական խումբը մանկավարժական նիստում լսելով տեղապահ Սուրէնեանից ստացած մի գրութիւնը, որով վերջինս խառնվում է զուտ մանկավարժական գործերի մէջ, միջամտում է մանկավարժական ժողովի իրաւունքներին և թելադրում նրան իր կողմնապահ որոշումը ճեմարանի 17 գործադուլաւոր ուսանողների նկատմամբ, in corpore իր հրաժարականը տուեց, բացի ուսուցիչ Ս. Կանայեանից։ Ուսուցչական ամբողջ կազմը, նախագահութեամբ պ. Մանուկ Աբեղեանի, որը տեսչի պաշտօնակատարն է, այլ ևս անկարող էր տանել այն վիրաւորանքներն ու ապօրինութիւնները, որ վերջերս տեղապահ Սուրէնեանը թոյլ էր տալիս մանկավարժական խորհրդի նկատմամբ, պաշտպան հանդիսանալով մի խումբ խռովարար ուսանողների։ Մանկավարժական ժողովը իր անժամանակեայ հրաժարականը մանրամասն պատճառաբանելով արձանագրից և ընդամէն 3 հոգի ներկայացուցիչներ ընտրեց իր միջից։ Սրանց վրա պարտաւորութիւն դրըվեց ներկայանալ անմիջապէս Վեհափառ Կաթողիկոսին, երբ սա Էջմիածին ժամանի, և մանրամասն զեկուցագիր-բողոք առաջադրել տեղապահի կատարած ու անբարեացակամ վերաբերմունքի մասին դէպի Գէորգեան ճեմարանը։ Այսպիսով ուրեմն տեղապահը իր կողմնապահ ուղղութեամբ, իր գործունէութեամբ, խաղալիք դառնալով իր «անխորհուրդ խորհրդականների» ձեռքին, այնպիսի թեթևամտութեամբ խառնվում էր ճեմարանի գործերի մէջ և պատճառ դարձաւ ճեմարանի ներքին կեանքի վերջին օրերի կազմալուծման։

Ո՞վ տուժեց այս բոլորի մէջ. աշակերտութիւնը թէ՞ ուսուցչութիւնը։ Այդ հարցի պատասխանը թողնում ենք տեղապահ Սուրէնեանի խղճին... Նիմանդ

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ*)

—

Մայիսի 17-ի նիստը

Նիստը բացվում է բժշկ. Նաւասարդեանի նախագահութեամբ և 55 անդամների ներկայութեամբ երեկ. ժամը 8-ին։

Ամենից առաջ ընդհանուր ժողովը հաստատեց դարձեալ երեք ճիւղերի նախահաշիւները՝ Ջխարի, Սուրամի և Ալէքսանդրօպօլի. վերջինիս նկատմամբ ընդունվեց դուրս հանել այն 2000 րուբլի գումարը, որ ճիւղի վարչութիւնը մտցրել է մուտքի մէջ իբրև պարտադիր նպաստ Թիֆլիսի խորհրդի կողմից, քանի որ խորհուրդը դեռ կազմած չունի դպրոցական գործին իր կողմից յատկացվելիք գումարի ցուցակը համաձայն իր ստացած դրամի։

Այնուհետև կարդացվեց խորհրդի կողմից մի զեկուցում, վերաբերեալ ճիւղերի ընդհանուր գործունէութեան։ Առաջ ենք բերում այդ զեկուցումի միայն ընդհանուր գծերը.

Գաւառական ճիւղերը ևս քաջ ըմբռնելով Կ. Հ. Բ. Ընկերութեան կուլտուրական նպատակների անհրաժեշտութիւնը՝ բազմադիմի առաջարկութիւններով հանդէս են գալիս ընկ. կանօնադրութեան սահմաններում։ Գաւառի խաւար ժողովրդի ամենակենսատու և հրամայողական պահանջը այս օրերս կրթութիւնն է, դպրոցն է. այդ հանգամանքի վրա են ծանրանում գլխաւորապէս բոլոր ճիւղերը, որոնցից իւրաքանչիւրը, իր տեղական առանձնայատուկ պայմաններն աչքի առաջ ունենալով, որոշ բարեփոխութիւններ է ցանկանում գործադրել իր գործունէութեան ասպարէզում։

Խորհուրդը իր մայիսի 13-ի նիստում, ընկ. բոլոր ճիւղերի գործունէութեան մէջ հնարաւոր միակերպութիւն մտցնելու համար, ցանկալի է գտել որ ընկ. բոլոր ճիւղերը գործեն նախ կրթական շրջանում, 1) հիմնելով դպրոցներ, երեկոյեան և կիրակնօրեայ դասընթացքներ և այլն, 2) բանալով գրադարան-ընթերցարաններ՝ ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու համար, 3) հիմնելով արհեստանոցներ, 4) նիւթական օգնութիւն հասցնելու չքաւորներին՝ կազմակերպված հիմնարկութիւնների միջոցով, ինչպիսին են օր. ձրի և էժանագին ճաշարանները, ապաստանոցները և այլն։

Այս զեկուցման շուրջը ծագեց մտքերի փոխանակութիւն։

Ջխարի ներկայացուցիչ հայր Գափամաջեան ցանկութիւն է յայտնում, որ Վրաստանի և Իմէրեթիայի կողմերում ապրող վրացախօս հայ աշակերտների համար առանձին տեսակի դասագրքեր կազմվեն։ Տէր-հայրը խնդրում է խորհրդից դպրոցներին նպաստ տալիս սկզբից խորհրդակցել ճիւղերի վարչութիւնների հետ։

Դ. Աղայեան շեշտում է, որ վրացախօս աշակերտների համար միակ անհրաժեշտ խնդիրը մանկական պարտէզներ, ծաղկոցներ հիմնելն է։ Այդ ծաղկոցներում պէտք է անպայման լինեն վրացագէտ վարժուհիներ։ Ինքնըստինքեան հասկանալի է՝ որ հայախօս աշակերտների հետ շփվելով, տեղացի վրացախօս երեխաները դիւրութեամբ մի երկու կամ երեք տարվայ ընթացքում կարող կը լինեն իւրացնել իրանց մայրենի լեզուն։

Գափամաջեան քահանան առարկում է պ. Աղայեանին, թէ Վրաստանում ապրող հայերը, առանց այն էլ գտնվելով տնտեսական աննպաստ պայմաններում, չեն կարող բնաւ բացի դպրոցներից ծաղկոցներ պահել։

Ալէքսանդրօպօլի ներկայացուցիչ պ. Ս. Թարաղեանը ասում է, որ խորհուրդը պէտք է պարզ և որոշակի յայտնէ, թէ այս կամ այն ճիւղին որքան գումար է յատկացնելու դպրոցական գործի համար գոնէ minimum չափով և որքան ժամանակով։ Այլապէս առաջ է գալիս մի անյարմար և տարօրինակ կացութիւն. յաճախ մի ճիւղ ստանալով առաջուց մի գումար խորհրդից՝ վստահ ձեռնարկում է դպրոց բանալու, գործը կարգին տարվում է, բայց յանկարծ գործող մարդկանց միանգամայն անսպասելի և անհասկանալի կերպով տեղեկութիւն է ստացվում խորհրդից, որ նպաստը այլևս չի ուղարկվի... Հասկանալի է դրա տպաւորութիւնը։

Ապրեսեան քահանայի կարծիքով պէտք է նկատի առնել ժողովրդի տնտեսական դրութեան փոփոխութիւնը։

Խորհրդի կողմից Ս. Յար. նկատում է, որ ճիւղերը չը պէտք է իրանց յոյսը դնեն միմիայն կենտրոնի վրա. եականը այն է, որ պէտք է զարկ տալ ժողովրդի նախաձեռնութեան ոգուն։ Խնդիրը նրանումն է, որ խորհրդի նախահաշւում դպրոցական գործին յատկացված 17000 րուբլին կանխիկ դրամ չէ, այլ խորհուրդը տարւայ ընթացքում յոյս ունենալով ստանալ այդչափ գումար՝ համապատասխան կերպով բաժին է հանում ճիւղերին։ Սկզբնական շրջանում խորհուրդը օգնութեան է գալիս շինական հասարակութիւններին գործի կարիքը, հիմքը դնելով, թողնելով որ գործին կենդանութիւն և զարգացում տայ ինքը ժողովուրդը իր միջոցներով։ Անշուշտ տարւայ վերջում խորհուրդը, երբ կունենայ իր ձեռքում յիշեալ 17000 րուբլին, պարտաւորապէս յարաբերութեանց մէջ կը մտնէ ճիւղերի վարչութիւնների հետ նպաստները համակերպ և կանօնաւոր կերպով բախշելու առիթով։

---

*) Տես «Մշակ» № 104.

Ռոստոմեան առարկում է Ս. Յարութիւնեանին, ասելով որ հայ գիւղացիութիւնը գտնվում է չափազանց տագնապալից և տնտեսական լիակատար քայքայված դրութեան մէջ. հետևաբար նա միանգամայն հնարաւորութիւնից զուրկ է թէկուզ տարեկան մի քանի րուբլով ծառայել կուլտուրական գործին։ Չը պէտք է յենվել արտասահմանեան օրինակի վրա, ուր հասարակ գիւղացին տարեկան ստանում է մօտ 2000 րուբլի արդիւնք, իսկ մեր տնանկ գիւղացու տարեկան բիւջէն կազմում է 60—70 րուբլի։ Նախ ժողովրդի համար ուսումը պէտք է պահանջ դարձնել. յետոյ արդէն ինքը ժողովուրդը իր ուսերի վրա կը տանի այդ գեղեցիկ գործը։ Նպաստները պէտք է յաջորդաբար ուղարկել դպրոցների համար։

Կ. Բաբայեան առաջարկում է հիմնել ուսումնական ֆոնդ, որի համար տուրք սահմանել։

Վերջ ի վերջոյ ընդհանուր ժողովը յանգում է Ալ. Քալանթարի ասածներին, որ խորհրդի զեկուցումը ի հարկէ պէտք է ընդունել, միացնելով միաժամանակ այն լրացումները, որ տեղական ամեն ճիւղ յայտնում է գործի կարևորութեան համար. Քալանթար շեշտեց օր. շրջիկների, դպրոցական նպաստի մինիմումը որոշելու վրա և այլն։

Կաֆեան կարևոր է գտնում ունենալ յատուկ մի ֆօնդ ընկերութեան հասոյթներից դպրոցական գործի համար։

Սպենդիարեան ասում է, որ այդ նոր առաջարկութիւն է և հարկաւոր է, որ Գ. Կաֆեան այդ գրաւոր ներկայացնէ խորհրդին, որը և քննելով իր եզրակացութեան հետ կը ներկայացնէ յառաջիկայ ընդհ. ժողովին։

Հարցը սպառված ընդունելով, նախագահի առաջարկութեամբ խորհուրդը զեկուցեց, որ, բացի փոքր նուէրներից, եղել են խոշոր նուէրներ 1) Ա. Մանթաշեանից 20000 րուբլի, որի տոկոսիքը՝ 900 րուբլի գործադրվելու է վարժարանների վրա, 2) Ախալքալաք գիւղաքաղաքի (Գօրու գաւ.) աւ. ք. Յով. Տէր-Գալստեանից կալուածքներ և այգի 20000 րուբլի արժողութեան, 3) Տ. Աֆրիկեանից 6900 րուբլի։

Խորհուրդը, գնահատելով Ալէքս. Մանթաշեանի և Տ. Աֆրիկեանի թէ այդ և թէ միւս ծառայութիւնները ընկերութեանը, առաջարկում է երկուսին միաձայն ընտրել ընկերութեան պատւաւոր անդամներ։

Մի քանի ժողովականների պահանջով, նախագահը ամեն մինին առաջարկում է առանձին-առանձին։

Ալ. Մանթաշեանի վերաբերութեամբ Հ. Առաքելեան, բժ. Աղասարեան և Ա. Նազարէթեան ընդգծում են նրա մատուցած խոշոր ծառայութիւնները և բարերարութիւնները թէ Կ. Հ. Բարեգործ. Ընկերութեանը և թէ ազգային զանազան հաստատութիւններին և հիմնարկութիւններին։ Ա. Մանթաշեան օրինակ Բարեգործականի սկզբնաւորութեան օրից եղել է եռանդուն գործողներից և նրա բարգաւաճմանը սատարողներից մինը և այդպէս նա շարունակել է ամբողջ 18 տարիներ իբրև վարչութեան անդամ և փոխ-նախագահ։ Նրան պատւաւոր անդամ պէտք է ընտրել միաձայն։

Ընդհանուր ժողովը բուռն ծափահարութեամբ Ալ. Իվ. Մանթաշեանին յայտարարում է միաձայն ընտրված Կ. Հ. Բ. Ը. պատւաւոր անդամ։

Տ. Աֆրիկեանի վերաբերութեամբ կարծիքները տարբերվում են։ Ս. Ջերբեզեան, Հ. Առաքելեան, Ա. Նազարէթեան, Ղ. Աղայեան և ուրիշները գտնում են, որ, ինչպէս կանօնադրութիւնն է պահանջում, նա դեռ քիչ առանձին ծառայութիւն է ցոյց տուել Կ. Հ. Բ. Ընկերութեան, որ իրաւունք լինէր ընտրել նրան պատւաւոր անդամ։ Նազարէթեանի ասելով՝ ճիշդ է, նա այս տարի միայն խորհրդին տեղեկացրել է, որ տալիս է 6900 ր., բայց այդ գումարից 1000 ր. խորհուրդը յանձնելու է Թիֆլիսի Դրամատիկական Ընկերութեանը, 1000 ր. Երևանի Թեմական դպրոցին, 200 ր. Երևանի Մարիամեան օր. դպրոցին, ուրեմն զուտ գումար, այն էլ սկզբում իր բացած դպրոցների համար, մնում է 4700 ր.։ Թւում է, թէ խորհուրդը այս գործում կատարելու է մի տեսակ միջնորդի դեր միայն։ Բացի այդ՝ խորհուրդը չունի հաստատ երաշխաւորութիւն Տ. Աֆրիկեանից, որ նա շարունակելու է այդ գումարը տալ՝ տարէ-տարի։ Ջերբեզեան նկատում է, թէ ինչու խորհուրդը չէ առաջարկում պատւաւոր անդամ ընտրել Տէր-Գալստեան քահանային, որ նուիրել է ընկ. 20,000 րուբլու արժողութեան կայքեր։

Առաքելեան մանրամասն պատմելով այն դէպքի մասին, որ արդէն մամուլի միջոցով դարձել է հասարակական սեփականութիւն, նկատում է, որ Տ. Աֆրիկեան զրկեց իր գրաւոր պարտաւորութիւնը Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Քիւրդստանի 7 գիւղերում իր բացած դպրոցներին նպաստը շարունակելու մասին։

Աղայեանի կարծիքով՝ երբեք փողը չը պէտք է կապել պատւաւոր անդամութեան հարցի հետ։ Խորհուրդը, իր որոշումը կայացնելիս, պարտաւոր էր նախահաշւում ամեն բան լաւ կշռել։ Պատւի կոչումը պէտք է շատ բարձր պահել ժամանակից։ Ուրիշ բան է, եթէ որոշվի Աֆրիկեանին միաձայն շնորհակալութիւն յայտնել իր նուէրի համար։

Շիրինեան, Կաֆեան, Պապովեան, Էդիլեան քահ., Սպենդիարեան, Յարութիւնեան ջանում են ապացուցանել, որ Տ. Աֆրիկեանը իսկական բարերար է եղել, կուլտուրական գործին ծառայել է ինքնաբերաբար, իսկ եթէ եղել է մի բացասական երևոյթ նրա նկատմամբ, դա ընդհանուր ժողովի իրաւասութիւնից դուրս է ընկնել. յայտնի են միայն նրա դրական կողմերը։ Այնպէս որ պէտք է առարկութիւններին վերջ տալ և, առաջնորդվելով այն մտքով՝ որ կուլտուրական գործին աջակցելու որքան կարելի է շատ մարդկանց թեքել, ընտրել տ. Աֆրիկեանին պատւաւոր անդամ միաձայն։

Գ. Կաֆեան առաջարկում է քուէարկութիւնը կատարել բաց և արձանագրել Աֆրիկեանին պատւաւոր անդամ ընտրելուն հակառակ անձանց անունները։

Այս առաջարկութեան դէմ լինում են բողոքներ գաղտնի քուէարկութիւն պահանջողների կողմից։

Ա. Նազարէթեան խիստ կերպով բողոքում է, որ ոմն Գ. Յակոբեան հրապարակօրէն ծանր վիրաւորանք հասցրեց Թաւրիզի Հայուհեաց Բ. Ընկ. և հայ գիւղացիութեանը, ասելով որ «սրանք փողը կերան» և այդ պատճառով էլ թէ Աֆրիկեան և թէ ուրիշները մերժում են նպաստել։

Նախագահը հարցը դնում է գաղտնի քուէարկութեան, որի հետևանքն այն եղաւ, որ Տ. Աֆրիկեան ընտրվում է Կ. Հ. Բ. Ընկերութեան պատւաւոր անդամ՝ ստանալով 45 սպիտակ և 10 սև։

10 րօպէի ընդմիջումից յետոյ նիստը վերսկսվում է, երբ Ս. Յարութիւնեան վճռականապէս հրաժարվում է խորհրդի կազմից, բայց այդ յայտարարութիւնը չէ ընդունվում։

Ընդհանուր ժողովի նախագահը խորհրդի անդամ Սպենդիարեանին խնդրեց զեկուցել Մ. Զմշկեանի երկու առաջարկութիւնների մասին, որոնցից մինը վերաբերում է նպաստների բաշխման եղանակը կանօնաւորելուն, իսկ միւսը Թիֆլիսում ազգային հիւանդանոց հիմնելուն։

Առաջին խնդրի նկատմամբ ինքը Յ. Սպենդիարեան մշակած ունի արդէն մի նախագիծ, որին զուգորդվում է Մ. Զմշկեանի առաջարկութիւնը։ Յ. Սպենդիարեանի նախագծի իմաստն այն է, որ նպաստների խնդիրը պէտք է միանգամայն անջատել խորհրդից և կատարել աղքատախնամ հոգաբարձուների միջոցով խորհրդի հսկողութեան ներքոյ և նրա այդ նպատակին յատկացրած 2000 րուբլի տարեկան նպաստով։

Խորհրդին կից կազմված նպաստամ. մասնաժողովը քննելով Յ. Սպենդիարեանի նախագիծը՝ գտել է, որ ներկայումս նրա առաջարկութիւնը կը հանդիպէ զանազան խոչընդոտների, որով ցանկալի է, որ ընդհ. ժողովը ընտրէ 10 հոգուց բաղկացած մի մասնախումբ, որ կը գործէ խորհրդի անդամի նախագահութեամբ։ Այս մասնախմբի գործունէութեան ուրուագիծը մշակելու է նախօրօք խորհուրդը և տալու է մասնաժողովին ի գործադրութիւն։

Ընդհանուր ժողովը, ընդունելով նախագիծը, բարւոք տեսաւ 10 անդամների ընտրութիւնը թողնել իրան խորհրդին։

Մ. Զմշկեանի երկրորդ առաջարկը թէև շատ ցանկալի համարվեց, բայց մերժվեց ընդհանուր ժողովից նիւթական միջոցների պակասութեան պատճառով։

Ընտրութիւններն անհնար եղաւ կատարել ժամանակը շատ ուշ լինելով, որով նախագահը ժողովը փակեց գիշերվայ ժամը 12 և 15 րօպէին։ Ե.

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Մայիսի 19-ին Պետերբուրգում մամուլի գործերի գլխաւոր վարչութիւնը բաց է արել 1908 թւականի ընթացքում Ռուսաստանում լոյս տեսած տպագրական բոլոր աշխատութիւնների ցուցահանդէսը։

Ցուցահանդէսը պարունակում է իր մէջ 23,852 հրատարակութիւններ և 2,056 լրագիրներ ու 500-ից աւելի թերթեր։

Ուշագրաւ է լրագրական բաժինը, ուր կենտրոնական տեղը բռնում է Պետերբուրգինը։ Ի ցոյց են դրված մօտ 70 լրագրական անուններ. ձախակողմեան ու աջակողմեան լրագիրները իրանց հրատարակութիւնների քանակով, համարեա, հաւասար են, բայց այդ միայն արտաքուստ է այդպէս թւում, որովհետև ձախակողմեան թերթերը առ հասարակ թէև հրատարակվում են մի քանի անուններով, բայց իրապէս նրանցից շատերը միևնոյն լրագիրն է։

Իրանց հրատարակութիւնների քանակով Ռուսաստանի քաղաքներից առաջին տեղը, ինչպէս յիշեցի, գրաւում է Պետերբուրգը (521), ապա գալիս է Մոսկվան (249), Վարշավան (203), Թիֆլիսը (91), (Կիեվը (61), Ռիգան (58), Կազանը (32), Բագուն (29) և այլն։

Աչքի ընկնող երևոյթը այն է, որ պարբերական մամուլը խոշոր նուաճումներ է անում տարածման տեսակէտից գաւառներում։

Ցուցահանդէսում կան զանազան տեսակ հրատարակութիւններ. պաշտօնական, բարոյա-կրթական, եկեղեցական և միսիոներական, եկեղեցական-վարչական, զինուորական, տեխնիքական, բժշկական և այլն։

Սեղանների վրա շարված են գրականութեան, գեղարուեստի ու գիտութեան վերաբերեալ թերթեր։

Առանձին տեղ է յատկացված պօռնոգրաֆիական բովանդակութիւն ունեցող գրականութեանը «Թեթև ժանր» ցուցանակի տակ, ուր մտել են «փողոցային-սենսացիոն» հրատարակութիւնները ոչ միայն ռուսական, այլ և լեհական, հրէական ու այլ և այլ լեզուներով, ինչպէս „Брачная Газета", „Міръ Тайны", „Мужчины", „Женщины", „Голосъ Любви", „Ночи безумныя" և այլն։ Դրանց մեծ մասը բարեբաղդաբար չքացել են արդէն։

Կան նաև երգիծաբանական հրատարակութիւններ։

Զուտ գեղարուեստական հրատարակութիւնները, ինչպէս նաև թատրոնականներն ու երաժշտականները շատ սակաւ են ու չափազանց քիչ թւով։ Աննշան են նաև «մօդային» վերաբերեալ հրատարակութիւնները։

Ցուցահանդէսը տեղաւորված է վերևի և ներքևի յարկում։

Վերոյիշեալները գտնվում են վերևի յարկում։

Ներքևի յարկում զետեղված են բոլոր ոչ-պարբերական հրատարակութիւնները, որոնք բաժանված են երեք մեծ բաժանմունքների — գրականական, գիտական ու գեղարուեստական։

Գրականական բաժանմունքում (վիպական ու պօէզիա) մանկական ու ժողովրդական հրատարակութիւնները աչքի են ընկնում անգեղարուեստական արտաքինով։

Գեղարուեստին նուիրված գրական աշխատութիւնները գրաւել են մի շատ համեստ անկիւն։ Մինչդեռ իր հաստութեամբ ու ճոխութեամբ զարմացնում է «խուզարկուական» գրականութիւնը, ուր փայլում են «երևելի» «Նատ Պինկերտօնները», «Շերլոկ-Հոլմսները», «Գողի օրագիրը» և այլն, մօտ 1,000 անուններով։ Այդ գրականութիւնից շուկայ է հանված 3 միլիոն օրինակից աւելի։

Մեծ տեղ են բռնում նաև կրօնական հրատարակութիւնները։ Հարուստ են հրէականները, որոնք գլխաւորապէս լոյս են տեսնում Վարշաւայում և Վիլնայում։

Պարբերական մամուլը հրատարակվում է եղել 47 լեզուներով, արաբերէնից սկսած մինչև էսպերանտօ։ Ռուսերէն լեզուով լոյս են տեսել 16,984 հրատարակութիւններ, լեհերէն՝ 2,317, գերմաներէն՝ 699, հրէական լեզուով՝ 626 և այլն։

Ընդհանուր առմամբ 1908 թիւը տուել է 2,100 հրատարակութիւն, որից 1,500-ը ռուսերէն լեզուով։

Ընդարձակ է գրքերի բաժինը։

Ցուցահանդէսը տևելու է երկու ամիս և մտադրութիւն կայ բաց պահել նրան մինչև յունիսի վերջը, որովհետև այդ ժամանակ Պետերբուրգում տեղի պիտի ունենայ գրավաճառների և հրատարակիչների ժողովը։

(Կը շարունակվի)

ՄԿՐՏԻՉ ԱՒԱԼԵԱՆ

Բագու, 16 մայիսի

Դարձեալ մի գերեզման։

Մեռաւ դերասան Մկրտիչ Աւալեանը։

70-ական թւականների հայկական թատրոնի ամենափայլուն էպօխայի գործիչներից մէկն էր նա, այն էպօխայի, երբ ասպարէզի վրա իրանց անշէջ փայլով փայլում էին Ադամեան, Զմշկեան, Սարդարեան, Հրաչեայ, Արուսեակ։

Երիտասարդական, համարեա թէ պատանեկան հասակից հայ թատրոնի փշոտ ասպարէզը մտնելով, նա երեսուն տարուց աւելի այդ տատասկոտ ասպարէզում քարշ էր եկել, մաշելով իր սիրտն ու հոգին, քայքայելով իր առողջութիւնը, բայց միշտ թատրոնի վառ սէրը իր սրտումն ունենալով։

Տաղանդ չէր նա, հսկայ անուն չունէր, հասարակութեան ամենալայն խաւերում չէին ճանաչում նրան, բայց ով ճանաչում էր, որտեղ տեսել էին նրա նուրբ խաղը, անձնուէր գործունէութիւնը բեմական ասպարէզում,—այնտեղ ամենքը սիրում, ամենքը յարգում էին նրան։

Ասպարէզից հեռացան Ադամեան ու Զմշկեան, Սարդարեան ու Հրաչեայ, բայց նա միշտ բեմի վրա էր, միշտ բեմին նուիրված։

Նոր շրջանը եկաւ, իր հետ բերելով և նոր գործիչներ։ Թատրոնը նոր փազիսի մէջ մտաւ։ Ասպարէզ եկան իրանց տաղանդներով Սիրանոյշ, Աբէլեան, Վրոյր և նրանց ետևից քարշ եկող մի շարք կիսատաղանդներ։

Վերջին տասնամեակի ընթացքում լայն տարածվեցին այսպէս անուանված «սիրողների» ներկայացումները։ Թատրոնի գաղափարը ընկաւ, գեղարուեստը ոտնակոխ եղաւ չարչիների կողմից, և Աւալեանը հեռացաւ ասպարէզից։ Հեռացաւ, չը կարողանալով տանել այդ ծաղրը դէպի գեղարուեստ, հեռացաւ իր սրտումն ունենալով անպայման սէրը դէպի իր սրտին այնքան սիրելի թատրոնը։

Եւ հասարակութիւնն էլ մոռացաւ նրան, մոռացաւ իր սիրելի, անձնուէր ու համեստ գործչին։ Եւ քաղցից չը մեռնելու համար, նա ստիպված էր մասնաւոր գործով պարապելու, ստիպված էր բեմը թողած, մասնաւոր ծառայութեան մտնելու։

Դերասանը գործակատար։

Եւ այդ թուքը լիզեց հայ հասարակութիւնը...

Ու վերջին տասնամեակի ընթացքում Աւալեանի անունը շատ հազիւ էինք պատահում աֆիշաներում։ Միայն 1906 թւականի երկրորդ կիսում, երբ Հայկական գաղութում կազմակերպվում է «Տեղական սիրողների մշտական խումբը», նա իր վրա է վերցնում այդ խմբի ռեժիսեօրութիւնը առանց որևէ վարձատրութեան և, խմբի մօտ 6 ամսվայ փայլուն գործունէութեան ընթացքում, պատւով տանում է այդ պաշտօնը։ Այնուհետև, խմբի քայքայումից յետոյ, նա ընդմիշտ հեռանում է ասպարէզից, մինչև որ անգութ մահը կտրում է նրա կեանքի թելը...

Ամսիս 13-ին նա միայնակ, ամենքից մոռացված, երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ, մեռնում է Նաւթարդիւնաբերողների խորհրդի Սև-Քաղաքի հիւանդանոցում։

Ոչ ոք չէր հետաքրքրվում վերջին ժամանակներս նրա կեանքով, և համարեա թէ ոչ ոք էլ չիմացաւ նրա մահվան մասին և թաղման ժամանակ միայն մի քանի ամենամօտ ծանօթներ և իր պաշտօնատեղի ծառայողներն էին յուղարկաւորում դագաղը։

Չը կար այն ժողովուրդը, որին նա շատ անգամ էր լացացրել գեղարուեստի տաճարի բեմից, չը կային ընկեր դերասաններից և ոչ մէկը, չը կար նոյնիսկ ոչ մի պսակ...

Ամենքը, ամենքը մոռացել էին նրան։

Եւ լուռ ու մոռացված՝ իր յաւիտենական հանգիստը գտաւ նա Նաւթաշխարհի գերեզմանատան անկիւններից մէկում...

Ասում են, որ հայը իր գործիչներին միայն լաւ թաղել գիտէ, բայց այդ առածն էլ չիրականացաւ Աւալեանի վերաբերմամբ։

Տասնեակ տարիների անդուլ գործունէութիւնից յետոյ ոչ մի պսակ, ոչ մի դամբանական և աննշմար թաղում—ահա հայ գործչի վախճանը։

Ամօթ մեզ։

Հանգիստ ոսկերացդ, մոռացութեան մէջ մնացած՝ հայ բեմի անխոնջ մշակ և անզուգական բարեկամ... Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երբ Թիֆլիսում տեղի էին ունենում տնայնագործական համագումարի նիստերը, երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօր Արխիպօվը ցանկութիւն յայտնեց դիտել տնայնագործութեան արհեստի արդիւնքները։ Սակայն այդ տեղի չունեցաւ, որովհետև համագումարը փակվելուց իսկոյն վերցվեցին ցոյց դրված իրերը։ Այդ պատճառով Հայ Տնայնագործական Ընկերութեան վարչութեան նախագահ Ալ. Քալանթար լիազօրի դիւանատան սենեակներից մինում կազմել էր մի ցուցահանդէս թէ տեղիս ընկերութեան և թէ Շուշու ու միւս ճիւղերի գործուածքներից և իրերից։ Երէկ պ. Քալանթար լիազօր Արխիպօվին մանրամասն բացատրութիւն տուեց երկրի և առհասարակ տնայնագործական արհեստի կազմակերպութեան վերաբերեալ։ Պ. լիազօրը շատ գոհ մնաց ցուցահանդէսից ու բացատրութիւններից և իր կողմից մի քանի դիտողութիւններ արեց։

◆ Բագուից մեզ հաղորդում են, որ մի քանի օր առաջ այդտեղ մի խումբ ինտելլիգենտ անձանց մէջ մի մասնաւոր խորհրդակցութիւն կայացաւ, մասնակցութեամբ այդ ժամանակ այդտեղ գտնվող պ. Հ. Առաքելեանի։ Խորհրդակցութեան նպատակն էր՝ արդեօք հարկաւո՞ր է յատուկ անձինք ուղարկել Պետերբուրգ կամ Մոսկվա, ողջունելու Վեհափառ Իզմիրլեան Կաթողիկոսին։ Յայտնվեց, որ առայժմ Պետերբուրգում ներկայանալու են Վեհափառին պ. պ. Բ. Դոլուխանեան և Ստեփան Մամիկոնեան մի խումբ ինտելլիգենտ շրջանի կողմից։

◆ Երէկ ստացանք հետևեալ հեռագիրը Էջմիածնից. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Գէորգ արքեպ. Սուրէնեանը, բացէ ի բաց, ի խախտումն կանօնադրութեան, միջամտելով Գէորգեան ճեմարանի մանկավարժական մարմնի գործունէութեան շրջանը, հարկադրեց բոլոր դասատուներին՝ բացի Կանայեանից՝ հրաժարական տալու։ Դասատուները յայտնեցին տեղակալին, որ իրանց իրաւունք են վերապահում Նորին Սրբութիւն Կաթողիկոսին բողոքելու և ներկայացնելու մի մանրամասն զեկուցագիր նրա բոլոր անկանօն գործողութիւնների մասին։ Ստայօդ լուրեր են տարածվում, որ իբր թէ մանկավարժական խորհուրդը որոշել է արձակել իր պաշտօնից մի խումբ լսարանականների։ Կանայեանը ստանձնեց ժամանակաւորապէս տեսչի պարտականութիւնները»։

◆ Մեղրիից հաղորդում են, որ այնտեղ ևս տեղի են ունեցել խուզարկութիւններ ու կալանաւորութիւններ։ Ի միջի այլոց կալանաւորված են երկու կանայք, իրանց փախուստ տուած ամուսինների փոխարէն, երևի այն նպատակով, որպէսզի ստիպած լինեն այդպիսով վերջիններիս յօժարակամ կերպով ներկայանալու շրջանային ոստիկանութեանը։

◆ Շուտով Քանաքեռ գիւղում կը բացվի կրթական արհեստանոց, որի համար Երևանի նահանգապետի ձեռքի տակ կայ որոշ գումար։ Թիֆլիսի Տնայնագործական Կօմիտէտը իր կողմից Ջուլհականոցը բանալու և սկզբնական աշխատանքների համար ուղարկելու է ինստրուկտոր Բէգզադեին, իսկ յետոյ արհեստանոցում կը դասաւանդէ տ. Սօֆիա Եկմալեան, որ լաւ գիտէր առաջուց գորգագործութիւն, իսկ վերջերս վարժվել է տնայնագործական արհեստի մէջ։

◆ Խմբագրութիւնս ստացաւ Վրաստանի Պատմական և Ազգագրական Ընկերութեան հրատարակութիւնը՝ «Վրաստանի հնութիւնները» հրատարակութեան երկրորդ հատորը, որը լոյս է տեսել Է. Թաղայշվիլու խմբագրութեամբ։ Գիրքը տպագրվել է Թիֆլիսում, «Շրօմա» տպարանում։ Նոյն հրատարակութեան իբրև յաւելուած լոյս է տեսել «Վարքագրական ալբոմը», որը պարունակում է իր մէջ վրաց երկու արքաների՝ Բագրատ IV-ի և Դաւիթ IV-ի հրովարտակները։

◆ Առաջիկայ կիրակի Թիֆլիսի ժողովարանի ամառային այգում տեղի կունենայ մի վերին աստիճանի հետաքրքրական ու մեծ զբօսանք յօգուտ Թիֆլիսի Հայ Տնայնագործական և Գիւղատնտեսական Ընկերութեան։

◆ Ստացանք Թաւրիզից «Պարսկահայ Կրթական Ընկերութեան» նախագիծը։

◆ Ստացանք Ն. Տէր-Ղևոնդեանի «Մայրենի լեզու», առաջին տարի, այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար, 34-րդ տիպ, գ. 20 կոպէկ։

◆ Թիֆլիս է եկել Երևանի քաղաքագլուխ պ. Ի. Ի. Մելիք-Աղամալեան, որ պէտք է Ալէքսանդրօպոլի և Նոր-Բայազէտի քաղաքագլուխների հետ պատգամաւորութեամբ ներկայանան Փոխարքային։

◆ Այս մայիսի 20-ից մինչև 25-ը Թիֆլիսում, Նեմեցկայա փողոցում, № 3 տանը բացված կը լինի Ալմազովայի կանանց արհեստագիտական դպրոցում գործուածքների ցուցահանդէս և վաճառք։ Մուտքը ձրի է։

◆ Պարիզից Թիֆլիս է եկել դօկտոր Աւ. Բաբայեան, որ ճանապարհին մտել է Կ. Պօլիս և տեսակցել Իզմիրլեան Վեհափառ Կաթողիկոսի հետ։

◆ Ստացանք Յ. Սօլովեանի «Ո՞վ է նա», պատմուածք անցածից, գ. 5 կոպէկ։

◆ Այս շաբաթվայ ընթացքում իշխանութեան թոյլտւութեամբ պէտք է կայանայ Թիֆլիսում ժողով, ընտրելու կարգադիր մասնաժողով Վեհափառ Կաթողիկոսի ընդունելութեան համար Թիֆլիսում։

◆ «Ախուրեանի» մէջ կարդում ենք. «Հայ բեմի անխոնջ մշակներից մէկը պ. Մկրտիչ Ջարչօղլեան հիւանդ է լուրջ կերպով և կարօտ նիւթական աջակցութեան իր քայքայված առողջութիւնը վերականգնեցնելու համար։ Այս նպատակի համար, մի խումբ համակրողներ մտադիր են յօգուտ այդ բեմի երախտաւորի մի ներկայացում կազմակերպել։ Ալէքսանդրօպոլի հասարակութեան վրա մեծ պարտք կայ նիւթական մի աչքի ընկնող նպաստ հասցնել իր այն զաւակին, որը 28 երկար տարիներ, անթիւ ու անհամար զրկանքների ու նեղութիւնների մէջ ծառայել է իր մայրենի բեմին։ Մկրտիչ Ջարչօղլեանի և նրա նմանների բեմական անխոնջ գործունէութիւնը այն ժամանակ մեզ աւելի ճիշդ կը պատկերանայ, եթէ մենք մի րօպէ անցկացնենք մեր յիշողութեան առջևից այն չարաբաղդ անցեալն ու ճակատագիրը, որին ենթակայ էր հայ բեմը, մի քանի տասնեակ տարիների ընթացքում»։

◆ «Рус. Вѣд.»-ն գրում է. «Հաղորդում են զանազան փոփոխութիւնների մասին շրջանային հոգաբարձուների միջև։ Իբր թէ թողնում է իր պաշտօնը Կովկասի ուսումնարանների հոգաբարձու պ. Ռուդոլֆը»։

◆ Վոլօգդայում բանադրանքի է ենթարկվել ազնուական պ. Ի-ն, 25 տարեկան։ Եկեղեցու մուտքի մօտ կախած՝ տեղական առաջնորդ Նիկոնի վճռում ասված է. «Ն. Ի-ն հաւատարիմ է մնում հայկական (?) հերձուածին և այլևս իրաւունք չունի համարվել ուղղափառ։ Այն իշխանութեամբ, որ ինձ անարժանիս տրված է, որպէս ս. առաքեալների յաջորդի, Տէրն Մեր Յիսուս Քրիստոսից և համաձայն առաքելական հրամանին, ես նրան հեռացնում եմ մեր Տիրոջ հետ հաղորդակցութիւնից և մշտական փրկումից, եթէ չը զղջայ։ Բանադրում եմ։ Ամէն»։ Իսկականը ստորագրել է Վոլօգդայի և Տօտմայի եպիսկոպոս Նիկոնը։ (Рѣчь)

ԼՈՒՐԵՐ ԲԱԹՈՒՄԻՑ

◆ Օրերումս երկու մահապարտի — ազգով վրացի — հրացանազարկ արեցին: Տեղական ռուս գործակալը հրամայում է երեք վրացի քահանաներին (ամեն մէկին զատ-զատ) գնալ մահապարտներին վերջին ճաշակ տալու: Երեքն էլ այլ և այլ պատճառներով մերժել էին գործակալի հրամանը կատարել. ինքն էր ներկայ գտնվել: Մահապարտները զարմանք էին յայտնել, թէ ինչու վրացի քահանայ չէին ուղարկել: Երկուսն էլ ընդունել էին հաղորդութիւնը: Միւս օրը զինուորական նահանգապետի կարգադրութեամբ աքսորվում են երեք քահանան էլ Բաթում քաղաքի և շրջանի սահմաններից:

◆ Այսօր, կիրակի, մայիսի 17-ին, տեղիս այգում նշանակված է ժողովրդական զբօսանք յօգուտ տեղիս հայոց եկեղեց.-ծխ. դպրոցի:

◆ Միևնոյն օրը նշանակված էր և տեղիս ս. Փրկիչ եկեղեցում ծխական հոգաբարձութիւն ընտրելու նպատակով ծխական ընդհանուր ժողով: Թէև ժողովը երկրորդ անգամն էր հրաւիրված և օրինապահանջ թւով ծխականներ կային ժողոված, բայց և այնպէս ընտրութիւնը յետաձգվեց եկող կիրակի օրվայ: Պատճառը յետաձգելու՝ նոյն օրը ժամը 3-ին նշանակված ժողովրդական զբօսանքն էր:

◆ Վերջին շաբաթիս մէջ սպանվեցին երկու հայ կին: Երկուսն էլ սպանվեցին մասնաւոր անձնական հողի վրա: Սպանողները անյայտ են: Սպանվածներից մինը բոլորովին աղքատ էր — մարդու և զաւակի տէր: Ասում են՝ սպանողները վախ են ունեցել, որ այդ կնոջ պատճառով կարող է պատահել նրա մօտ եկող երիտասարդների մէջ արիւնհեղութիւն, աւելի նպատակայարմար են գտել այդ ենթադրելի սպանութեան պատճառին սպանել մէջտեղից վերացնել: Միւս կինը իր տանը դրամ է ունեցել: Սպանել են և բոլոր դրամն ու տան մէջ ունեցածները գողացել տարել են: M.

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թիֆլիս են եկել յայտնի թատրոնական գործիչներ եղբարք Ռաֆայէլ և Ռօբէրտ Ադէլհէյմները իրանց խմբով և մի շարք ներկայացումներ պէտք է տան Արտիստական Ընկերութեան թատրոնում: Երկուշաբթի, մայիսի 18-ին, խումբը ներկայացրեց Շէկսպիրի «Օտէլլօ» ողբերգութիւնը, ուր մէջ Օտէլլօյի դերը կատարում էր Ռօբէրտ Ադէլհէյմը, իսկ Եագօյի դերը կատարում էր տ. Զարուսսկայա: Թատրոնը լի չէր. ներկայ հանդիսականները գեղարուեստական մեծ հաճոյք ստացան եղբարք Ադէլհէյմների խաղից:

—

Ախալքալաք, 17 մայիսի

Ախալքալաքի թմրած, լճացած կեանքը մի քիչ փոփոխութեան ենթարկվեց մեր տաղանդաւոր դերասանուհի տ. Սիրանոյշի մեր քաղաքին տուած այցելութեամբ: Ախալքալաքը, յետ ընկած գաւառական քաղաքներից մինը լինելով, միշտ էլ զուրկ է եղել գեղարուեստի համայնչ ազդեցութիւնից: Հատ ու կէնտ սիրողների տուած ներկայացումները մի-մի ժողովրդեան զովարար ցող են հանդիսանում մեր նեխված կեանքի անդաստանում: Որքան տարբերութիւն մեր սիրողների և գեղարուեստի սպասաւորների տուած ներկայացումների միջև: Սիրողների անփութութիւնը դէպի իրանց դերերը, չը խորասուզվելը պիէսի հոգեբանութեան մէջ, իսկ դերասանների ամեն մի քայլը չափված, ամեն մի խօսքը մտածված, ամեն մի շարժումը կոկած ու ձևած: Ականատեսը յուզվում, ուրախանում, տրտմում, լաց լինում, վրդովվում է գլխաւոր դերակատարի հետ և նոյնիսկ եթէ քար-սիրտ մարդ էլ լինի, գոնէ մի րոպէ սրտի քարութիւնը կը փափկանայ: Այս տեսակէտից որքան բարի է եղել տիկին Սիրանոյշը, որ Ախալքալաքի պէս մի յետ ընկած քաղաքի այց է տալիս:

Երէկ ամսիս 16-ին, հասարակական ակումբի դահլիճում, տեղական սիրողների մասնակցութեամբ տեղի ունեցաւ «Զաւակ» պիէսայի ներկայացումը:

Իմ նպատակից դուրս է այստեղ մի որևէ ակնարկ ձգելու յարգելի տիկնոջ խաղի մասին. նա կարողացաւ Մադլէնի դերում արտայայտվել գաւառական բեմի վրա այնքան, որքան ներում էին տեղիս բեմի աննպաստ պայմանները և սիրողների ոյժը: Բայց այսքանը կասեմ, որ որդեկորոյս մօր կրած վիշտն ու հոգեկան տանջանքները խլեցին համարեա բոլորից արցունքի կաթիլներ...

Ցիշեցէք գաւառական յետ ընկած անկիւնները, մեր հայկական բեմի զարդեր. գաւառը խարխափում է խոր խաւարի մէջ. նա կարօտ է գեղարուեստի սթափեցնող կենսարար լոյսին:

Դուք չէք ուզում ճանաչել յետ ընկած գաւառական անկիւնները, մօտենալ ժողովրդին. դա յանցանք է ձեր կողմից:

Այսօր նոյն ներկայացումը յարգելի տիկինը կրկնելու է էժանացրած գներով ժողովրդի համար:

Մեր աչքի ընկնող հարուստներից շատերը փայլում էին իրանց բացակայութեամբ:

Տոմսակները համարեա բոլորը ծախվել էին: Էն-էն

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Атрпетъ. «Мамедъ-Али Шахъ и Современная Персія», съ иллюстраціями. 129 стр., Александрополь, 1909, цѣна 1 р.

Այս ռուսերէն աշխատութեան մէջ պ. Ատրպետը տալիս է Իրանի ներկայ թագակիր Մահմեդ Ալի շահի կենսագրութիւնը, շաղկապած այնպիսի կենցաղական մանրամասնութիւններով, որոնց ընթերցողը, նամանաւանդ Պարսկաստանի կեանքի հետ քիչ ծանօթը, կը կարդայ մեծ հետաքրքրութեամբ: Սակայն կենսագրութիւնը կցկտուր, էպիզօդիկ է դառնում շահի կեանքի ամենահետաքրքրական շրջանում. մէջլիսի օրերին, նրա բռնի և արիւնալի ցրման և երկրի մէջ թագաւորող անարխիայի ժամանակ:

Կենսագրութեանը կցված է մի հետազօտութիւն Պարսկաստանի ներկայ վարչական կազմի մասին՝ պաշտօնները կապալով տալու ավեր հնութիւնից մնացած կորստաբեր սովորութիւնը, մի սիստեմ, առանց որի հեռացման երկիրը անկարող կը լինի քայլել վերածնման ուղիով...

Ափսոս որ գրքի լեզուն վատ ռուսերէն է, լի՝ վարժ ականջի համար անախորժ, ոչ ռուսերէն դարձուածքներով: Հայ լրագրում անտեղի կը լինէր առաջ բերել բազմաթիւ ապացոյցներ. դա անշուշտ պիտի խանգարէ գրքի տարածմանը: Խորհուրդ կը տայինք հեղինակին մնացած ռուսերէն հրատարակելիքները խմբագրել տալ աւելի ձեռնհաս մարդկանց:

Պետրոս Զաքարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 18 մայիսի

Ամսիս 17-ին Կ. Հ. Բ. Ընկ. ընդհանուր ժողովում խորհրդի նախագահ՝ պ. Սամսոն Յարութիւնեանի հրաժարականը գաւառական ճիւղերից եկած անդամներիս խիստ ցաւ պատճառեց:

Գտնելով պ. Յարութիւնեանին Ընկերութեան համար կարևոր ու բեղմնաւոր գործիչ, մենք, ճիւղերից եկած ներքևում ստորագրող անդամներս, խնդրում ենք, որ նա յետ վերցնէր այդ հրաժարականը և կրկին շարունակէր իր օգտաւէտ գործունէութիւնը յօգուտ Ընկերութեան բարգաւաճման:

Խնդրում ենք յարգելի խմբագրութիւնից, մեր այս երկտող գրութիւնը տպագրէք «Մշակի» առաջիկայ համարում:

Մ. Ղօնղադաղեանց (Շուշուց), Յ. ք. Առիւծեանց (Սուրամից), Ի. Տէր-Գրիգորեանց (Սուրամից), Սաղաթէլ Թաքաղեանց (Ալէքսանդրօպօլից), Խ. Թէլմիչեան (Ախալցխայից), Յ. Աւագեանց (Բօրժոմից), Էմ. ք. Դէմիրեան (Արդահանից), Ա. Մելիք-Բէգլարեան (Գանձակից), Խ. Կարապետեան (Ախալքալաքից), Յ. Մելիք-Բէգլարեան (Գանձակից), Յ. Տօնականեան (Ախալքալաքից), Ա. ք. Գափամաճեան (Չխարից):

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԱՍԷՐ ԳՈՐԾ

Պաստէօրի անուան յայտնի ինստիտուտը Պարիզում նորերս ստացել է մի խոշոր նուիրաբերութիւն՝ 25 միլիօն ֆրանկ—9 և կէս միլիօն ռուբլի—որ կտակել է ֆրանսիացի հրեայ Օզարիսը: Այդ գումարի տոկոսները, տարեկան 600,000 ֆրանկ, պիտի ծախսվեն թոքախտի, սիֆիլիսի և քաղցկեղի հետազօտութիւնների վրա:

Հետաքրքրական է Օզարիսի պատմութիւնը: Նա 15 տարեկան հասակում ոտով Բորդօյից եկել է Պարիզ և ծառայի պաշտօնով մտել մի հարուստ հրեայ բանկիրի մօտ: Շուտով պատանին ցոյց տուեց նշանաւոր ընդունակութիւններ, գրաւեց տիրոջ համակրանքը: Տէրը սկսեց յանձնարարութիւններ տալ նրան և Օզարիսը կամաց-կամաց անցաւ գործի գլուխը: Իր հովանաւորողի մահից յետոյ Օզարիսը հիմնեց սեփական բանկային գրասենեակ և հարստացաւ: Նա ապրեց 82 տարի՝ թողնելով 40 միլիօն ֆր. կարողութիւն: Օզարիսը ամուրի էր և չը գիտէր ինչպէս գործադրել իր կարողութիւնը: Նա նշանաւոր գումար նուիրեց Վիլհելմ Տելլի արձանի կառուցմանը՝ Շվեյցարիայում, բաժանեց բաւական փողեր իր բարեկամներին: Բայց նա ցանկանում էր մի բարի գործով յաւերժացնել իր յիշատակը: Նրա այդ խոշոր նուէրով Պաստէօրի ինստիտուտում պիտի ուսումնասիրվեն մարդկութեան ամենախոշոր թշնամիները՝ թոքախտը, սիֆիլիսը և քաղցկեղը ու միջոցներ գտնվեն նրանց դէմ մաքառելու:

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Ադանայի կոտորածների շուրջը.—Ադանայի նահանգի Բաղչա գաւառակում և վիճակում հայաբնակ ամբողջ գիւղեր հիմնովին ոչնչացման են ենթարկվել այդ շրջանի կոտորածի միջոցին: Այսպէս Բաղչա գաւառակում թիւրքերը հրդեհել և կործանել են հետևեալ գիւղերը. Հասան-Բէյլի՝ 400 տուն, Բաղչա՝ 100 տ., Եանըք-Դէյիրմէնի՝ 25, Լափաջիլ՝ 100, Սավրանը՝ 10, Կըլլաջ՝ 15 տուն: Իսլահիյէ գաւառում աւերվեցին հետևեալ գիւղերը. Խառնը՝ 100 տ., Կուրթլար՝ 20, Գեօք-Չայըր՝ 75, Քիշնազ՝ 40, Կուշչու՝ 35, Քէլլէր՝ 35, Ինջիլի՝ 30 տուն: Վերոյիշեալ գիւղերի կոտորածից ազատված հայերի թիւը հազիւ հասնի 250 հոգու: Մնացեալները բոլորն էլ զոհ են գնացել գազանացած ամբոխի վայրագութիւններին: Բաղչա գիւղում թիւրք ամբոխը, ի միջի այլոց, սպանել է գիւղի քահանայ Վահան Տէր-Ստեփանեանին՝ կախաղան բարձրացնելով նրան:

Թիւրք կառավարութիւնը որոշել է դատի ենթարկել Ադանայի նախկին վալի Ջէվադ-բէյին, որ մեղադրվում է իրան յանձնված նահանգում կոտորածի ժամանակ շարժումը ճնշելու համար համապատասխան միջոցներ ձեռք չառնելու համար: Ջէվադ-բէյը ճանաչված է առհասարակ իբրև անընդունակ վարիչ: Նա ուղարկվում է Ադանա՝ այնտեղ դատվելու համար:

Հայ զինուորները թիւրքական բանակում.—Նիկոմիդիայից (Կ. Պօլսի նահանգում) հաղորդում են, որ վերջերս այստեղի և նրա շրջակայ հայ գիւղերի այն երիտասարդները, որոնք 20 տարին թևակոխած են արդէն, զինուորագրվել են ըստ օրինի և շուտով պիտի պաշտօնի կոչվեն: Այս լուրը Կ. Պօլսի հայերի շրջանում առանձին գոհունակութեամբ է ընդունվել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԵՐԲԻԱ

Յեղափոխական շարժումը.— Բելգրադից ստացված տեղեկութիւնների հիման վրա, Վիէննայի լրագիրները հաղորդում են, որ սերբ կառավարութիւնը մտադիր է սկուպշչինայի քննութեան առաջադրել մի օրինագիծ հարաւային սլաւօնական յեղափոխական ագիտացիայի դէմ մաքառելու համար, որը որպէս թէ ուղղված է սերբիական երկու թագաւորող տների դէմ Սերբիայի ու Չերնոգորիայի:

Հասարակապետական պրօպագանդայի արագութեամբ տարածվելը, որը սկսեց ուժեղ կերպով արտայայտվել Բօսնիայի և Հերցեգօվինայի անեքսիայի հարցում սերբ կառավարութեան կրած պարտութիւնից յետոյ, չափազանց անհանգստութիւն է պատճառում Բելգրադի կառավարչական շրջաններին:

Կարագէօրգիէվիչների հեղինակութիւնը Սերբիայում ներկայումս,—Վիէննայի լրագիրների ասելով,—աւելի չէ այն հեղինակութիւնից, որը վայելում էին Օբրէնովիչները 1903 թւականի նախօրեակում:

Այն օրինագիծը, որ մտադրութիւն ունի առաջարկել կառավարութիւնը, լուրերի համաձայն, բաղկացած է մի շարք ռեպրեսիվ միջոցներից՝ ուղղված հասարակապետական յեղափոխական կազմակերպութիւնների դէմ:

Վիէննայում և Բուդապեշտում մեծ հետաքրքրութեամբ հետևում են սերբիական յեղափոխական պրօպագանդայի աջողութեանը:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

18 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թիւրքաց դեսպան Թուրխան փաշան թագաւոր կայսրին յանձնեց իր հաւատարմագրերը:

Օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացաւ և մեռաւ 1 հոգի:

Քաղաքապետը 1000 ռուբլի տուգանքի ենթարկեց լեհական լեզուով հրատարակվող «Կրայ» շաբաթաթերթի խմբագիր Կուրլովսկուն «Երիտասարդութիւնը և կառավարական դպրոցները» յօդուածի համար:

Պետերբուրգի վիճակի հոգաբարձուն թոյլատրեց պրոֆ. Սավինին բանալ ժամանակաւոր դասընթացքներ ժողովրդական ուսուցիչների համար:

Արտասահմանից վերադարձաւ արտաքին գործերի մինիստր Իզվօլսկին:

Ռուսաց դեսպանը Սպանիայում՝ կոմս Կասսինին՝ արձակվեց պաշտօնից խնդիրքի համաձայն:

ՄՕՍԿՎԱ: Սլաւօն հիւրերը խորհրդակցեցին Մոսկվայի արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների հետ սլաւօնական ցուցահանդէսի մասին: Ցուցահանդէսի գաղափարը սկզբունքով ընդունվեց:

ԱՄՕՅ: Հարաւային Չինաստանի զանազան տեղերում երևացել է բաւական ուժեղ կերպով ժանտախտ, որ ամեն օր 60 զոհ է տանում:

ԴԱԼԼԱՍ: Տէխասում ցիկլօնը մահացրեց 30-ից աւելի մարդ. ցիկլօնից յետոյ հրդեհ ծագեց, որ մեծ աւերածութիւններ գործեց:

ՊԱՐԻԶ: Ֆրանսիական դեսպան Պետերբուրգում նշանակվեց Լուին:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Ա. Ս. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—86

ԲԺԻՇԿ
Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Վերադառնալով՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը:
Ներքին և ջղային հիւանդութիւններ:
Առանձնապէս՝ սրտի և թոքերի:
Ընդունելութիւնը՝ { առաւօտեան ժ. 10—12-ը. երեկոյեան ժ. 5—6-ը.
Սօլօլակսկայա փող., № 6, տ. Միրզօյեվի:
(օ. մ.) 344. 100—66

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ամառային երթևեկութիւն

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱԳՈՒ՝ ՊՕՍՏԱՏԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Եւլախ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ., Բալաջարի 4 ժ. 43 ր., Բագու՝ 6 ժ. 7 ր. երեկ.: ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ. Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Եւլախ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բագու՝ 12 ժ. 44 ր. գիշ.: ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի՝ 1 ժ. 44 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 18 ցերեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ, պօստատար 1 ժ. 44 ր. գիշեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Ջուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.: ՄԱՐԴԱՏԱՐԱՊԲԱՆՔ. 5 ժ. երեկ., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երևան՝ 10 ժ. 7 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԳ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 41 ր. առ.: ՊՕՍՏԱՏԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.: ՄԱՐԴԱՏԱՐ՝ 1 ժ. 1 ր. ցերեկ., Բաթում է հաս- 2 ժ. 34 ր. ցերեկ.:

Թիֆլիս է հասնում

ԲԱԳՈՒԻՑ՝ ՊՕՍՏԱՏ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. ցերեկ., ՄԱՐԴԱՏԱՐ. № 11՝ 10 ժ. 45 ր. առ.:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԳ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍՏ. 10 ժ. 38 ր. առ. ՄԱՐԴԱՏԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.:

ՋՈՒԼՖԱՅԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե. Ալմազօվայի
ԿԱՆԱՆՑ
Արհեստագիտական դպրոցում
մայիսի 20-ից մինչև 25-ը, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 3-ը և 4-ից մինչև ժամը 7-ը երեկոյեան տեղի կունենայ
Ցուցահանդէս եւ վաճառք
Մուտքը ձրի է: Նեմեցկայա փող. № 3.
459. 1—1

!Կենդանի պանօրամա!

կարող է ունենալ իւրաքանչիւրը՝ ձեռք բերելով ամերիկ. ծալվող խոշորացոյց, ամբողջապ. նիկելաջրած, կոթով և 30 հատ լուսանկ. երկմաս պատկերով, 4—2 վերշ. մեծ., Պարիզի յայտնի Ն. Պ. Գ ատելիէի. բնական կերպով ցոյց է տալիս ռուս. և արտասահմ. տեսար., քաղաքներ, պարիզեան ժանր և այլն: Խոշորացոյցի գինը՝ 30 տեսարաններով՝ միայն 2 ր. 25 կ.: Ծանապարհածախք 40 կ. (Սիբիր՝ 75 կ.): Ուղարկվում է վերադիր վճ. և առանց կանխավճ.: Կան զանազան պատկերներ մօտ 10,000: 5 հատը 36 կ.: Հասցէագրել՝ С. Д. Перельманъ, Варшава, Панская 39/33.

Նորութիւն! Մեսսինայի և Կալաբրիայի երկրաշարժի պատկերները՝ 9 հատ—90 կ.: Փոքր ձևի խոշորաց., 150 պատկերներով—1 ր. 75 կ.:

(В. 15736) 192. 1—1

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԷԴԵՎԻ
«Этикетъ утвержденъ прав.» մակագրութիւնով.

Այս միջոցը մի քանի օրում բոլորովին ոչնչացնում է

Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:

(10, 20, 30) 50—46

ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՀԱՅՈՒՀԻ,
որ հիմնաւորապէս գիտէ ֆրանսերէն և երաժշտութիւն (դաշնամուր) և ունի 9 տարվայ փորձառութիւն, նոյնպէս ծանօթ է ռուսաց տարրական լեզուին, ցանկանում է ունենալ դասեր ինտելիգենտ ընտանիքներում: Համաձայն է ուրիշ քաղաքներ ևս գնալու: Կարող է ընկերակցել արտասահման ճանապարհորդողներին իբրև թարգման:
Հասցէն տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը:
(հ. կ.) 429. 3—3

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութում
վաճառվում է
Բժշկապետ Ա. Քաթանեանի
ԱՂԻՔՆԵՐԻ ՃԻՃՈՒՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,
25 նկարներով, 40 երես, գինն է 10 կոպ.:
Գաւառացիները կարող են ուղարկել պօստի մարկաներ՝ 12 կոպ.:
454. 2—2

Մայրենի լեզու ա. տ. Նոր—34-րդ տիպ. վերամշակած և ճոխացրած.	գինը 20 կ.	գում. 13 կ.
Մայրենի լեզու բ. տ. Նոր — 23 տիպ. հիմնովին փոփոխած	գինը 30 կ.	» 21 կ.
նոյն » » 22 տիպ. սակաւաթիւ	» 30 կ.	» 19 կ.
Մայրենի լեզու գ. տ. վերջին տիպ. լրացրած	» 50 կ.	» 35 կ.
Մայրենի լեզու դ. տ. աւելացրած են բազմաթիւ նիւթեր հայի կեանքից և պատմութիւնից	» 55 կ.	» 38 կ.
Քերականութիւն Մ. լեզուի	» 50 կ.	» 30 կ.
Հէնչէլի՝ Թւաբան. խնդիրներ մ. ա. և բ.	» 35 կ.	» 21 կ.
» » » մ. երրորդ	» 50 կ.	» 30 կ.

ա. Վաճառվում են «Գուտտենբերգ» և «Կենտրոնական գրավ-ներում.
բ. » ինձ մօտ՝ Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. № 70.
Հասցէս՝ Николаю Теръ-Гевондянъ, Тифлисъ.
(հ. 2.) 460. 2—1

Իւրաքանչիւրը կարող է լուսանկարել!

ГЛАВНЫЙ СКЛАДЪ
АРТИСТИЧ. ФОТОГРАФ.
АППАРАТОВЪ
ВАРШАВА
О-во ЖОЗЕФИНЪ
ТЕАТРАЛЬ. ПЛ.

Հնարված է սիրողների լուսանկարչական մեքենայ «ՕԽՕՏՆԻԿ» անունով: Իւրաքանչիւր անձի անհրաժեշտ է, որ իր տանն ունենայ էժան գին ունեցող «ՕԽՕՏՆԻԿ» լուսանկարչական մեքենան, որով ամեն մէկը կարող է

առանց նախապէս սովորած լինելու

նկարել խմբեր, տեսարաններ, պատկերներ և այլն միանգամայն հեշտութեամբ: Մեքենան ամուր կազմուածք ունի: Ապակիները 6×9 սանտ. մեծ.: Վայրկենական նորագոյն փական: Ամբողջ մեքենան մետաղից է: Ապակիները փոխելու համար կատարելագործված և ճիշդ կազմուածքով: Գինը՝ բոլոր պարագաների հետ միասին—մօտ 30 զանազան առարկաներ և ձեռնարկ—15 ռուբլու փոխարէն ՄԻԱՅՆ 5 ՌՈՒԲ. 65 ԿՈՊ.: Ճանապարհածախքը՝ 68 կոպ., II և III դասիները—1 ր. 25 կոպ.: Պատուէրներն ուղարկվում են վերադիր վճարով և ԱՌԱՆՑ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ: Խնդրում ենք հասցէագրել՝ Главный складъ Артист. фотограф. аппаратовъ О-во Жозефинъ. Варшава, Театральная плош. 26.
Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով:
(հ.) (В. 32643) 420. 3—1

ԵՒԼԱԽ—ՇՈՒՇԻ

Թագաւորական պօստային ճանապարհի կայարանատէրերը յայտնում են հասարակութեան, որ իրանք՝ աւելացնելով պօստային ձիերի և կայարանների թիւը՝ մայիսի 1-ից նոր եւ մեծ յարմարութիւններ են ստեղծել Շուշի ամարանոց գնացողների համար,
որպէսզի վերջիններս կարելոյն չափ կարողանան գնալ Շուշի հեշտ և արագ կերպով:
Ընդունվում են՝ հեռագրով կամ նամակներով՝ յանձնարարութիւններ վեց, ութ և տասը տեղանի դիլիժանսների, երկու և չորս տեղանի կօլեասկաների և ֆայէտօնների համար, որոնք պատրաստ կերպով կը տրվեն Եւլախ ժամանողներին, երկաթուղային գնացքը կայարան հասած րոպէին: Գները՝ դիլիժանսների համար՝ 4 և 5 ռուբլի, 1 պուդ ձրի բօգաժով (աւելիի համար կը ստացվի իւրաքանչիւր պուդից 70 կոպ.): Միւս կառքերն արժեն 15 ռուբլուց մինչև 25 ռուբլի՝ ճանապարհորդների իբրով, որքան կարելի կը լինի տեղաւորել: Կայարանները խիստ մաքուր են և ծառայողները քաղաքավարի: Հանգստանալու կամ գիշերելու համար ցանկացողներին տրվում են ձրի սենեակներ: Ուղարկված յանձնարարութիւններ պարտաւորական են անողների համար: Հասցէն՝ Евлахъ, Завѣдывающему станціею.
(հ. ու. կ.) 406. 7—6